

ՄԵՐ ԱՆԿԻՆԵՆ

ԵՐՈՎԱԿԱՆ ԱՃՈՂ ԶԵՏԱՔՐՐՈՒՅԻՆՆԵՐ՝ ԶԱՅԱՍՏԱՆՈՎ

Վերջին օրերուն տեղի ունեցան երկու կարեւոր իրադարձութիւններ, որոնք կու գան ցոյց տալու թէ, Երոզական երկիրները աւելի մօտն սկսած են հետաքրքրութիւնը Զայաստանի ու Արցախի հարցերով: Նախ Երոզական խորհրդարանը ձայներու մեծ առաւելութեամբ ընդունեց բանաձեւ՝ դատապարտելով Ատրպէյճանի արարքները Զայաստանի հետ սահմանին եւ Լեռնային Ղարաբաղի շրջափակումը, հոն ապրող 120 հազար բնակչութիւնը գրկելով սնունդի, վառելանիւթի եւ դեղորայքի հասանելիութեան իրաւունքէն: Բանաձեւը խստօրէն դատապարտեց Ատրպէյճանի գործողութիւնները կոչ ընելով անոր, միջազգային կազմակերպութիւններուն տրամադրելու անարգել մուտք դէպի Լեռնային Ղարաբաղ՝ իրավիճակը գնահատելու եւ անհրաժեշտ մարդասիրական օգնութիւնը տրամադրելու համար: Այս փաստաթուղթը Պաքուի կողմէ արժանացաւ խիստ դատապարտումի՝ Երոզական խորհրդարանը մեղադրելով կողմնակալութեան մէջ:

Զբաւարարուելով այսքանով, Երոզական խորհրդարանի արտաքին յարաբերութիւններու հարցերով կոմիտէի Պրոքսելի մէջ կայացող նիստին, որուն ներկայ էր Զայաստանի արտաքին գործոց նախարարը, Ատրպէյճանի արտաքին գործոց նախարարը չէր հրաւիրուած:

Երկրորդ կարեւոր որոշումը կայացուց Երոզական Սիութեան խորհուրդը՝ Զայաստանի եւ Ատրպէյճանի սահման ուղարկելու քաղաքացիական դիտորդական առաքելութիւն, առայժմ բաղկացած 100 հոգիներէ, սակայն անոնց թիւը կրնայ բարձրանալ յառաջիկային: Այս առաքելութեան իրաւասութիւնը երկու տարուայ համար է, որ կրնայ երկարաձգուիլ ապագային:

Բնականաբար Զայաստան ողջունեց այս որոշումը, սակայն ուշագրաւ էր որ Ատրպէյճան մեծ աղմուկ չբարձրացուց այս հարցով, քաջ գիտակցելով որ, անկարող է որեւէ բան ընելու, երբ դիտորդները պիտի տեղակայուին Զայաստանի հողին վրայ:

Կ'ակնկալուի որ, այս առաքելութիւնը բաւականին զսպիչ դեր կատարէ կանխելու համար նոր ռազմական գործողութիւններ՝ Ատրպէյճանի կողմէ: Սեպտեմբերեան պատերազմէն ետք, նոյնանման աւելի փոքր կազմով դիտորդ-

ԵՐՈՎԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ԸՆԴՈՒՆԱԾ ՓԱՍՏԱՔՈՒՂՔՐ Կ'ԱՐՏԱՅԱՅՈՒՄ ԱՐԱԿԱՅԱԿԱՆ ԻՐԱԿԱՆՈՒՅԻՆՆԵՐ. ՓԱՉԻՆԵԱՆ

ՀՀ կառավարութեան նիստի ընթացքին ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեան ըսաւ որ, տեղի ունեցած է շատ կարեւոր իրադարձութիւն՝ գնահատական տալով Երոզական խորհրդարանի Յունուար 18-ին ընդունած զեկոյցին:

«Երոզական խորհրդարանի՝ Յունուարի 16-19-ը տեղի ունեցած լիազուար նստաշրջանի ընթացքում, այսինքն՝ Յունուարի 18-ին կայացած քուէարկութեամբ ընդունուել է «Ընդհանուր արտաքին եւ անվտանգային քաղաքականութեան իրականացում. 2022 թուականի տարեկան զեկոյցը», որը զեկուցել է արտաքին յարաբերութիւնների յանձնաժողովի նախագահ Տէյվիտ Մքալիսթրնը:

Այդ փաստաթղթում չափազանց կարեւոր արձանագրումներ կան մեր տարածաշրջանի եւ Հայաստանի Հանրապետութեան մասին: Մասնաւորապէս, զեկոյցը խստօրէն դատապարտում է Հայաստանի ինքնիշխան տարածքի նկատմամբ Ատրպէյճանի 2022 թուականի Սեպտեմբերի յարձակումը, որը գնահատել է որպէս գինադադարի խախտում եւ խաղաղութեան գործընթացի համար լուրջ, բացասական հետեւանքներ ունեցող գործողութիւն:



Վերահաստատել է, որ Հայաստանի տարածքային ամբողջականութիւնը պէտք է լիարժէքօրէն յարգուի եւ կոչ է արել ատրպէյճանական իշխանութիւններին՝ անմիջապէս դուրս բերել զօրքերը Հայաստանի բոլոր տարածքներից: Համոզմունք է արտայայտում առ այն, որ ռազմական միջոցներով Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ կայուն խաղաղութեան հասնել հնարաւոր չէ: Դա պահանջում է համապարփակ քաղաքական կարգաւորում՝ միջազգային իրաւունքին համապատասխան, ներառեալ

ՄԱԿ-ի կանոնադրութիւնը, ԵԱՀԿ 1975 թուականի Հելսինքեան եզրափակիչ ուխտը, ինչպէս նաեւ ԵԱՀԿ Մինսքի խումբի 2009 թուականի հիմնարար՝ տարածքային ամբողջականութեան, ինքնորոշման եւ ուժի չհիրաւման սկզբունքները: Մտահոգութիւն է արտայայտում Ատրպէյճանի գինուած ուժերի կողմից հայ ռազմագերիների ու քաղաքացիական անձանց նկատմամբ պատերազմական յանցա-

Զօրամասի Կացարանին Մէջ Բռնկած Զրդեհէն Զոհուած Է 15 Զինուոր



Ազատ գիւղի զօրամասի կացարանը հրդեհէն ետք

ՀՀ Պաշտպանութեան Նախարարութեան «N» զօրամասի ճարտարապետական-սակրաւորային վաշտի կացարանին մէջ Յունուար 19-ին բռնկած հրդեհի հետեւանքով զոհուած է 15 զինուոր, 3 զինուորի վիճակը կը գնահատուի ծանր:

Յունուար 19-ին՝ ժամը 01:30-ի սահմաններուն, հրդեհ բռնկած է Գեղարքունիքի մարզի Ազատ գիւղի տարածքին մէջ տեղակայուած ՀՀ Պաշտպանութեան Նախարարութեան «N» զօրամասի ճարտարապետական-սակրաւորային վաշ-

տի կացարանին մէջ:

Կառավարութեան նիստին ժամանակ վարչապետ Նիկոլ Փաշինեան որոշ մանրամասնութիւններ ներկայացուցած է 15 զինուորի մահուան պատճառ դարձած հրդեհի դէպքէն: Վարչապետը նախ նշած է, որ 2022 թուականի Դեկտեմբեր 21-ին Զինուած Ուժերու Գլխաւոր Շտաբի պետը ստորագրած է կարգադրութիւն հետեւեալ վերնագրով՝ «Զինուած ուժերու զօրամասերուն մէջ տեղի ունեցած հրդեհ-

Պլինքըն Ալիեւին Կոչ Ըրած Է Բանալու Լաչինի Սիջանցքը

ԱՄՆ պետական քարտուղար Էնթոնի Պլինքըն հեռախօսազրոյց ունեցած է Ատրպէյճանի նախագահ Իլհամ Ալիեւի հետ՝ կոչ ընելով անյապաղ բանալու Լաչինի միջանցքը:

Պետական Քարտուղարութեան Մամուլի Ծառայութեան փոխանցմամբ՝ Պլինքըն ընդգծած է, որ Լաչինի միջանցքին մէջ մարդասիրական ճգնաժամի վտանգը կը խաթարէ Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ խաղաղութեան հեռանկարները:

«Պետական քարտուղարը խրախուսած է նախագահ Ալիեւին կրկնապատկել ջանքերը Հայաստանի հետ երկկողմ խաղաղ բանակցութիւններուն մէջ», ըսուած է հաղորդագրութեան մէջ:

Հեռախօսազրոյցին մասին իր թուիթըրեան էջով գրառում կատարած է Պլինքըն՝ նշելով. «ԱՄՆ յանձնառու է աջակցելու այդ ջանքերուն»:

Ատրպէյճանի նախագահը, իր հերթին, կրկնած է պաշտօնական Պաքուի դիրքորոշումը՝ հերքելով Լաչինի միջանցքին փակ ըլլալը: Իլհամ Ալիեւ, ըստ ատրպէյճանական լրատուամիջոցներուն, ներ-

ՐԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

Ազատ Գիւղի «Ձօրամասը» Միակը ԶԷ. Ինչ Պայմաններում Են Ծառայում Սահմանապահ Ձիճուորները

ՆԱՐԵԿ ՍԱՐՏԻՐՈՍԵԱՆ ՍԵՒԱԴԱ ՂԱԶԱՐԵԱՆ

Յուճուարի 19-ին Գեղարքունիքի մարզի Ազատ գիւղի տարածքում տեղակայուած ՊՆ N զօրամասի ինժեներասակրաւորային վաշտի կացարանում բռնկուած հրդեհի հետեւանքով զոհուեց 15 զինծառայող: Հրապարակուած լուսանկարներին երեւում էր, որ այն հասարակ, գիւղական տուն էր:

Հաշուի առնելով փաստը, որ այդ բնակավայրերում մինչեւ վերջերս չկային ռազմական օբիեկտներ, իսկ բոլորիս յայտնի զօրամասերը գտնուում են Սոթք գիւղի մերձակայքում, «Փաստերի ստուգման հարթակի» լրագրողներն այցելեցին այդ տարածքի սահմանամերձ մի քանի այլ բնակավայրեր եւ պարզեցին, որ Ազատ գիւղում տեղակայուած «կացարանը» միակը չէ:

Քօղարկիչ ցանցը կացարանները հեշտ յայտնաբերելու միջոց

Սկսենք թերեւս նրանից, որ բնակավայրերի տարածքում տեղակայուած կացարանները գտնելը աւելի հեշտ էր, քան կարելի էր պատկերացնել: Դրանք գտանք քօղարկիչ ցանցերի «շնորհիւ»: Այսինքն՝ այն, ինչը նախատեսուած է քօղարկելու համար, օգնում է հեշտ գտնել: Եւ եթէ մեր լրագրողները դրանք գտել են առանց որեւէ լրացուցիչ տեղեկութիւններ իմանալու, ապա ակնյայտ է, որ Ատրպէյճանի զինուած ուժերի համար դրանք գտնելն աւելի հեշտ է:

Հաշուի առնելով թեմայի նրբութիւնն ու վտանգաւորութիւնը, ինչպէս նաեւ առաջնորդուելով զինուորներին չվնասելու սկզբունքով՝ չենք յայտնի, թէ որտեղ են եղել այդ կացարանները եւ քանիսն էին դրանք, սակայն կարող ենք ասել, որ դրանք սովորական գիւղական տանը տեղակայուած զօրամասերն էին: Չենք յայտնի նաեւ, որ քանի զինուորի համար են դրանք նախատեսուած կամ քանի զինուորներ էին բնակուում այդ տանը: Վարդենիսի այդ գիւղերում զագամատակարարում չկայ, եւ տները ջեռուցում են փայտով, ածուխով եւ նոյնիսկ աթարով: Կացարանում ջեռուցման սենեակում տեղադրուած էր վառարան (ամենայն հաւանականութեամբ՝ նախատեսուած ածխի համար): Սենեակում էլ տան շրջակայքում դարսուած փայտերից են թաղրուում է, որ ջեռուցման համար օգտագործուում էր փայտ:

Նոյն սենեակը օգտագործուում էր նաեւ որպէս գրասենեակ, գինանոց եւ այլն: Ի դէպ, զօրամասերում զինանոցները լինում են առանձին սենեակում, երկաթեայ ճաղերով եւ խիստ պահպանուած են հակահրդեհային անվտանգութեան կանոնները: Ձիճուորները չէ կարող լինել որեւէ հրավտանգ առարկայ: Իսկ այստեղ՝ զինանոցից ընդամենը 3-4 մետր հեռավորութեան վրայ, տեղադրուած էր վառարան, սենեակում կային նաեւ սեղաններ, աթոռներ, բազմոց, յատակը փայտեայ էր եւ այլն: Այսինքն՝ հրդեհի դէպքում զինանոցում եղած պայթուցիկ վառուելու հաւանականութիւնը շատ մեծ էր:

«Կացարանի» պայմանները

Պէտք է նշել նաեւ, որ պատուհանազօղին դրուած էր կրակմարիչ: Թէ որքանով էր այն օգտագործուած էլ կամ արդեօք դեռ պիտանեւ լիութեան ժամկէտի մէջ էր՝ դժուար է ասել, այնուամենայնիւ արձանագրուած էր, որ այն գոյութիւն ունէր: Յատկանշական է նաեւ այն, որ մեզ հանդիպած ամենաբարձր կոչումով զինուորականը, որի անունը եւս անվտանգութեան նկատառումներից ելնելով չենք հրապարակի, շարունակում էր պնդել, որ իրենք ապրում են շատ լաւ պայմաններում, բողոքելու ոչինչ չունեն, ժամանակին սնունդը հասցւում է, սպիտակեղէնը փոխում, զինուորները՝ լողանում: Վերջինս միայն մէկ խնդրանք ունէր մեզ. «Այնպէս անել, որ բացուի Լաչինի միջանցքը եւ Ալիբեք չյարձակուի»:

Ազատ գիւղի «կացարանը» Երբ հասանք գիւղի այրուած տանը, փլատակները դեռեւս ծխում էին: Դրսում թափուած մետաղի կտորներից ակնյայտ էր, որ դրանք զինուորական մահճակալներ էին: Թէ որտեղ էր տեղադրուած եղել վառարանը հրդեհի պահին՝ յայտնի չէ, սակայն աւերուած տնից երեւում է, որ ենթադրեալ հրդեհուած սենեակն ունէր մէկ մուտք: Սենեակներից մէկի կանգուն մնացած երկու պատուհաններն էլ ամբողջովն էին ճաղակալներով: Նոյնպիսի ճաղակալներ ունէր նաեւ տան միւս սենեակը: Ծաղապանդակներից մէկը վնասուած էր, ինչից կարելի է ենթադրել, որ փորձ էր արուել այն շարժելով դուրս գալ սենեակից, բայց չէր ստացուել:

Ազատ գիւղի «կացարանը»

Երկու սենեակներն էլ ունէին մէկական ելք դէպի միջանցք կամ ընդհանուր օգտագործման սենեակ: Ենթադրուում է, որ վառարանը տեղադրուած է եղել հենց այդ սենեակում, դռներին բաւական մօտիկ եւ բռնկուած հրդեհի հետեւանքով փաստացի փակուել էին սենեակների միակ ելքերը: Ըստ Կաղաստրի կոմիտէի տուեալների՝ Ազատ գիւղի տունը պատկանում է Սվետլանա Աթանեսեանին: Վերջինս տան սեփականատէրն է 2006 թուականից: Տան նկատմամբ անշարժ գոյքի այլ գործարքների մասին տեղեկութիւններ (վարձակալութիւն, անհատուց օգտագործում, նուիրատուութիւն եւ այլն) Կաղաստրի կոմիտէում առկայ չեն:

Երբ հասանք գիւղի այրուած տանը, փլատակները դեռեւս ծխում էին: Դրսում թափուած մետաղի կտորներից ակնյայտ էր, որ դրանք զինուորական մահճակալներ էին: Թէ որտեղ էր տեղադրուած եղել վառարանը հրդեհի պահին՝ յայտնի չէ, սակայն աւերուած տնից երեւում է, որ ենթադրեալ հրդեհուած սենեակն ունէր մէկ մուտք: Սենեակներից մէկի կանգուն մնացած երկու պատուհաններն էլ ամբողջովն էին ճաղակալներով: Նոյնպիսի ճաղակալներ ունէր նաեւ տան միւս սենեակը: Ծաղապանդակներից մէկը վնասուած էր, ինչից կարելի է ենթադրել, որ փորձ էր արուել այն շարժելով դուրս գալ սենեակից, բայց չէր ստացուել:

Երբուանից են զինուորները գիւղի տներում

Թէ երբուանից են զինուորները բնակուում այդ կացարաններում՝ տարբեր յայտարարութիւններ են հնչել: Վարչապետի խօսքով՝ զինուորներն Ազատ գիւղի կացարանում են 2020-ի պատերազմից յետոյ, Քննչական կոմիտէի հաղորդագրութեան համաձայն՝ 2021-ի մայիսեան ներխուժումից յետոյ, Յատուկ յանձնարարութիւններով դեսպան էր մոտ Մարուքեանի պնդմամբ՝ 2022-ի սեպտեմբերեան ազդեհից յետոյ:

ՊՆ մամուլի բարտուղար Արամ Թորոսեանը մեզ հետ զրոյցում պարզաբանել էր, որ զինծառայողներն այդտեղ էին 2020-ից յետոյ, սակայն մշտական տեղակայուել էին 2021-ի դէպքերից յետոյ: Ըստ էութեան՝ հաստատուելով եւ՝ վարչապետին, եւ՝ Քննչական կոմիտէին:

Մէկ այլ կացարանում մեզ հետ զրոյցած զինծառայողն էլ յայտնեց, որ իրենք այդտեղ են 2022-ի

Շաբ.ը էջ 6

Չարցեր. Ինչն է Բերել Կլարիոն Երեւան Կամ Ինչ է Երեւան Բերել Կլարը

ՅԱԿՈԲ ԲԱՂԱԵԱՆ

«Վերադարձ Երեւան» մէկօրեայ հանդիպումների: Լաչինի միջանցքի շուրջ իրավիճակը լուրջ է եւ պէտք է շտապ լուծումներ գտնել: Ես անհամբեր սպասում եմ քննարկումներին՝ յետագայ ուղիները բացայայտելու համար: ԵՄ նպատակը մնում է Հայաստան Ատրպէյճան համապարփակ կարգաւորումը», Երեւան ժամանելուց առաջ գրել է Եւրամիտութեան յատուկ ներկայացուցիչ Տոյֆօ Կլարը: Ինչ օրակարգով կամ առաջարկներով է Երեւան գալիս Կլարը, յայտնի չէ, գուցէ դրանք որոշակի ուրուագծուեն Երեւանեան հանդիպումների մասին հաղորդագրութիւններում կամ դրանց ստղատակերում:

Ին Պրիւսելում հանդիպումը անցկացնել քառակողմ՝ նաեւ Ֆրանսայի նախագահի մասնակցութեամբ, իսկ Պաքուն հրաժարուեց դրանից, յայտարարելով, որ Ֆրանսան անաչառ չէ: Իսկ 2022 թուականի Դեկտեմբերի 7-ի հանդիպման պայմանաւորութեան շրջանում կայացուել էր նոյն թուականի Հոկտեմբերի 6-ին Պրահայում, հենց Ֆրանսայի մասնակցութեամբ քառակողմ ձեւաչափով ու Երեւանի դիտարկումը միանգամայն տրամաբանական ու հիմնաւոր էր՝ եթէ պայմանաւորութեան շրջանում եղել է քառակողմ, ուրեմն հանդիպումն էլ պէտք է լինի ըստ պայմանաւորութեան: Ատրպէյճանը հրաժարուեց, հանդիպումը չեղաւ, փոխարէնը սրուեց իրավիճակը Լաչինի միջանցքի շուրջ:

Երեւան գալիս Տոյֆօ Կլարը՝ Հայաստանին յորդորելու, որ համաձայնի առանց Ֆրանսայի եռակողմ պրիւսելեան հանդիպման, թէ՛ Շարլ Միշելի յատուկ ներկայացուցիչն ունի այլ առաջարկներ: Կլարը վերջին անգամ Հայաստանում եղաւ Դեկտեմբերի սկզբին, հենց պրիւսելեան հանդիպման չեղարկումից յետոյ: Հայաստանից նա մեկնեց Անքարա, որտեղ հանդիպումներից յետոյ յայտարարել էր, որ Անքարան ունի հետաքրքիր առաջարկներ: Այդ ամէնին յաջորդում է Լաչինի միջանցքի աւելի քան 40-օրեայ արգելափակումը: Ի՞նչ է ուզում Կլարը Երեւանից: Ընդ որում, ուշագրաւ է, որ նա Երեւան է ժամանում գործնականում զուգահեռ այն որոշման, որ Եւրամիտութիւնը պէտք է կայացնի Հայաստանում քաղաքացիական դիտորդական երկարաժամկէտ՝ երկամեայ առաքելութեան տեղակայման առնչութեամբ, Հայաստանի ու Ատրպէյճանի սահմանի մշտադիտարկման համար: Կլարը այդ որոշման հարցում պայման է բերել Հայաստան:

Ընդհանուր առմամբ, Կլարը կարող է Երեւան այցի միջոցով փորձ անել այսպէս ասած վերականգնել պրիւսելեան ձեւաչափը, որի լուծարման մասին իհարկէ ոչ ոք չի յայտարարել ոչինչ, բայց որը փաստացի արգելակուեց այն բանից յետոյ, երբ Երեւանը անհրաժեշտ համարեց Դեկտեմբերի 7-

Դա հիմք է եզրակացնելու, որ Պաքուն Լաչինի ուղղութեամբ սադրանքի համար էլ չեղարկեց Պրիւսելի գործընթացը, թէ՛ հակառակը՝ Պրիւսելը մեծ հաշուով արգելակեց Ֆրանսան, իսկ Պաքուն ի պատասխան դրա գնաց Լաչինի սադրանքի: Այս հանգամանքներից է կախուած, թէ ինչ օրակարգով է

«ԱՌԱՋԻՆ ԼՐԱՏՈՒԱԿԱՆ»



ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐ

ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
 ՄՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԴՆԱՎԿԵԱՆ
 ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
 Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ
 ԳՐԻԳՈՐ ԽՈՏԱՆԵԱՆ

ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ
 ՎԱՐԷ ԱԶԱՊԱՐԵԱՆ

MASSIS Weekly
 Organ of the **Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA**
 1060 N. Allen Ave.
 Pasadena, CA 91104
 Phone: (626) 797-7680
 Fax: (626) 797-6863
 E-Mail: massis2@earthlink.net
<http://www.massisweekly.com>

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
 Published Weekly
 Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
 USA \$50.00, \$100.00 (First Class)
 Canada \$125.00 (Air Mail)
 Overseas \$250.00 (Air Mail).
 All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid
 at Pasadena CA.
 Please Send Address Change To
MASSIS WEEKLY

ԼՈՒՐԵՐ

Դատախազութիւնը Կը Պահանջէ 25 Անձէ Բռնագանձել 324 Գոյք Եւ 57 Սիլիառ Դրամ

Ապօրինի ծագում ունեցող գոյքի բռնագանձման մասին օրէնքը ուժի մէջ մտած է 2020 թուականի Սեպտեմբեր 3-ին, սակայն մինչ օրս դատարանը որեւէ գործով վճիռ դեռ չէ կայացուցած, մինչդեռ առաջին հայցադիմումը դատարան ներկայացուած է աւելի քան մէկ տարի առաջ՝ 2021 թուականի Դեկտեմբերին, ԱԱԾ նախկին սպայ Սերոբ Յարութիւնեանի դէմ:

Civic.am-ի տեղեկութիւններով՝ դատական նիստերը շարքով 1 անգամ կը կայանան, հետեւաբար նման գործերով պէտք չէ 1-2 ամսուան մէջ դատարանի վճիռ ակնկալել, աւելին՝ քանի մը գործերով նոյնիսկ դատաւորներու փոփոխութիւն եղած է: Այս պահի դրութեամբ դատաքննութեան փուլին մէջ է 25 հայցադիմում, որոնք կ'առնչուին ոչ միայն նախկին ու ներկայ պաշտօնեաներուն, այլեւ անոնց հետ փոխկապակցուած անձերու:

Այս հայցադիմումներով Գլխաւոր Դատախազութիւնը դատարանէն կը պահանջէ պատասխանողներէն բռնագանձել 57 միլիառ 397 միլիոն դրամ, ինչպէս նաեւ

324 գոյք՝ 47 միլիառ դրամ ընդհանուր արժողութեամբ: Նշենք, որ այս թիւերուն մէջ հաշուարկուած չէ իրաւաբանական անձերու գոյքին արժէքը, որուն պարագային հնարաւոր է նշուած թիւը եռապատկուի:

Յիշեցնենք, որ պատասխանողներու շարքին են նաեւ Սահմանադրական Դատարանի ներկայիս դատաւոր Հրայր Թովմասեանն ու Հայաստանի պաշտպանութեան նախկին նախարար, «Հայաստան» խմբակցութեան պատգամաւոր Սէյրան Օհանեանն ու իր կիներ՝ Ռուզաննա Խաչատրեանը: Անոնք դատարանին մէջ պէտք է ապացուցեն, որ գոյքը կ'ա՛մ չունի ապօրինի ծագում, կ'ա՛մ իրենք այդ գոյքին հետ որեւէ առնչութիւն չունին:

Նշենք, որ Գլխաւոր Դատախազութիւնը 2020 թուականի Սեպտեմբերէն մինչեւ 2022 թուականի Դեկտեմբեր 30-ը ապօրինի ծագում ունեցող գոյքի բռնագանձման վերաբերեալ 356 ուսումնասիրութիւն նախաձեռնած է, որոնք կ'առնչուին թէ՛ ներկայիս, թէ՛ նախկին պաշտօնեաներուն, ինչպէս նաեւ անոնց հետ փոխկապակցուած անձերու:

Սերժ Սարգսեանի Ընտանիքին Պատկանող Գոյքը 38 Տոկոսով «Ապօրինի Ձեռք Բերուած» Է

Հակափտածութեան Դատարանին մէջ Սերժ Սարգսեանի եւ անոր դուստրերուն՝ Անուշ Մինասեանի եւ Սաթենիկ Սարգսեանի գործով կայացան նախնական լսումները: Հայցուոր կողմը ներկայացուց հայցին հիմքը, ըստ որուն՝ ապօրինի միջոցներով ձեռք բերուած գոյք դիտարկուած են եւ յօգուտ Հայաստանի Հանրապետութեան բռնագանձման ենթակա են Սերժ Սարգսեանէն՝ «Արարատ պանք» ընկերութեան մէջ ներդրուած 107 միլիոն 998 հազար 656 դրամ աւանդի ամբողջ գումարը եւ աւանդին դիմաց 2018 թուականէն կուտակուած տոկոսները՝ 44 միլիոն 280 հազար 352 դրամ:



Նախկին նախագահ Սերժ Սարգսեան

ուած օրինական եկամուտներով, հնարաւոր չէ բռնագանձել, քանի որ 2006-2021 թուականներու ընթացքին փոխանցուած է, բայց հնարաւոր չէ նոյնականացնել փոխանցողին եւ վերադարձնել:

Հայցուորը կ'առաջարկէ բռնագանձել նաեւ Ռիթա Սարգսեանի ժառանգներ համարուող Սաթենիկ եւ Անուշ Սարգսեաններէն, Ռիթա Սարգսեանի անունով «Արարատ պանք» ընկերութեան մէջ ներդրուած 95 միլիոն դրամ աւանդը եւ սոյն աւանդին տոկոսները՝ 30 միլիոն 435 հազար 935 դրամի չափով:

Եկամուտ Ստացող Աշխատատեղիներու Թուաքանակը Կազմած Է 704 Հազար 420

Հարկ վճարողներու կողմէ 2022 թուականի Դեկտեմբեր ամսուան համար ներկայացուած եկամտային հարկի եւ ընկերային վճարի ամսուան տուեալներով՝ եկամուտ ստացող աշխատատեղիներու թուաքանակը կազմած է 704 հազար 420, որ գերազանցած է նախորդ տարուան նոյն ամսուան ցուցանիշը՝ 44.949-ով կամ 6.8%-ով: Այս մասին կը յայտնեն Պետական Եկամուտներու Կոմիտէէն:

Միաժամանակ, Կոմիտէն կը յայտնէ, որ հարկ վճարողներու կողմէ դուրս գրուած հաշուարկային փաստաթուղթերու (այդ շարքին՝ ՀՏՄ կտրօններու) տուեալներով՝ 2023 թուականի Յունուար 1-էն մինչեւ Յունուար 20 ինկած ժամանակահատուածին իրականացուած է 26,7 միլիոն գործարք՝ 524,7 միլիառ դրամ արժէքով, որ կը գերազանցէ նախորդ տարուան նոյն ժամանակահատուածի ցուցանիշը՝ 2,5 միլիոն գործարքով կամ 10.6%-ով:


ՀՀ ՄԻՊ-ը Հրաժարականի Դիմում Ներկայացուցած Է Ազգային Ժողով

Հայաստանի մարդու իրաւունքներու պաշտպան Քրիսթինէ Գրիգորեան հրաժարականի դիմում ներկայացուցած է Ազգային ժողով, խորհրդարանի լրատուականէն «Ազատութեան» յայտնեցին, որ դիմումը ստացած են:

ՄԻՊ աշխատակազմը կը յայտնէ, որ Պաշտպանը հրաժարական ներկայացուցած է այլ աշխատանքի անցնելու առնչութեամբ՝ նշելով, որ «պատշաճ պահին Գրիգորեան հանրութիւնը պիտի տեղեկացնէ այլ աշխատանքի մասին տեղեկութիւնը, իսկ մինչ այդ ձեռնպահ կը մնայ այս թեմայով որեւէ մեկնաբանութենէ»:

Պաշտպանին լիազօրութիւնները կը դադրին վերջինիս կողմէ հրաժարականի դիմումը ներկայացնելէ ոչ ուշ, քան մէկ շաբթուան ընթացքին կրկին հրաժարականի դիմում ներկայացուելու պարագային:

Քրիսթինէ Գրիգորեանը ՄԻՊ պաշտօնը զբաղեցուց ուղիղ մէկ տարի: Անոր թեկնածութիւնը իշխող «Քաղաքացիական Պայմանագիր» կուսակցութիւնը առաջադրած էր:



Մարդու իրաւունքներու հրաժարեալ պաշտպան Քրիսթինէ Գրիգորեան

րած էր: Իշխանականները կը համարէին, որ Գրիգորեանը արհեստավարժ է եւ կը համապատասխանէ այդ պաշտօնին: Մինչդեռ ընդդիմադիրները կը քննադատէին Գրիգորեանը՝ համարելով, որ ան պիտի դառնայ իշխանութեան պաշտպանը:

«Պապիկեանը Որեւիցէ Ձեռով Այս Ամէնուն Հետ Զի Կրնար Կապ Ունենալ». Ալէն Սիմոնեան

Ազգային ժողովի նախագահ Ալէն Սիմոնեան լրագրողներու հետ ճեպագրուցին անդրադարձաւ Գեղարքունիքի մարզի Ազատ գիւղի գործադիր մէջ տեղի ունեցած ողբերգական դէպքին: «Թող քննութիւնը գնայ, վստահեցնում եմ ձեզ, որ բոլոր մեղաւորները նաեւ քրէափրաւական պատասխանատուութիւն կը կրեն», ըսաւ ան:



Ազգային ժողովի նախագահ Ալէն Սիմոնեան

Հարցին, թէ նաեւ պաշտպանութեան նախարարը պաշտօնանկ կ'ըլլա՞ց, Ալէն Սիմոնեանը պատասխանեց, որ մարդիկ որոնք պատասխանատու են անվտանգութեան համար, պիտի պատժուին: Ինչ կը վերաբերի քաղաքական պատասխանատուութեան, քաղաքական ղեկավարութիւնը իր կողմէ աշխատանքը կատարած է եւ պիտի շարունակէ ընել: Ըստ անոր՝ դժբախտ պատահարը սարքել քաղաքական շահարկման թեմա եւ այդ փորձէ մտցնել քաղաքական օրակարգ, անթոյլատրելի է:

տուութիւնը, որն ինքը վերցրել է, լինելով փոխվարչապետ, պատերազմից յետոյ այդ վիճակում նա համաձայնութիւն է տուել բանակը վերցնել ու սկսել բարեփոխումներ»:

«Պաշտպանութեան նախարարը որեւիցէ ձեռով այս ամէնի հետ չի կարող կապ ունենալ, որովհետեւ իր գործառույթի մասով իր աշխատանքն ամբողջովին արել է: Եւ այդ քաղաքական սակարկումները նախարարի վերաբերեալ շատ սին ու անտեղի եմ համարում, որովհետեւ այն բարեփոխումները, որոնք պարոն Պապիկեանն է իրականացնում, նաեւ այն պատասխանա-

Հարցին, թէ ի՞նչ բարեփոխումներու մասին է խօսքը, Ալէն Սիմոնեանը պատասխանեց. «Բարեփոխումներն սկսած անձնակազմի փոփոխութիւնից, վերջացրած կահաւորումով, որը բոլոր տեղերում փոխուել է ու փոխուում է: Նաեւ դրսից տարբեր որակի ու բարձր մակարդակի կահաւորումներ ենք ներմուծել Հայաստան»:


Գլխաւոր Դատախազը Սէյրան Օհանեանի Նկատմամբ Քրեական Հետապնդում Յարուցելուն Համաձայնութիւն Տալու Միջոցորդազիր Ներկայացուցած Է Աժ Նախագահին

Հայաստանի Հանրապետութեան գլխաւոր դատախազ Աննա Վարդապետեան ՀՀ Ազգային ժողովի նախագահ Ալէն Սիմոնեանին ներկայացուցած է Աժ «Հայաստան» խմբակցութեան ղեկավար, ՀՀ պաշտպանութեան նախկին նախարարի նկատմամբ քրէական հետապնդում յարուցելուն համաձայնութիւն տալու մասին երեք միջոցորդագիր: Ըստ նոյն կէտի պահանջին՝ միջոցորդագիրն կցուած է նաեւ պատգամաւորին նկատմամբ քրէական հետապնդում յարուցելուն համաձայնութիւն տալու մասին Ազգային ժողովի որոշման նախագիծը:

ՀՀ Սահմանադրութեան 96-րդ յօդուածին համաձայն՝ պատգամաւորի նկատմամբ քրէական հետապնդում կրնայ յարուցուել միայն Ազգային ժողովին համաձայնութեամբ:

ԼՈՒՐԵՐ

Փաշինեան Եւ Քլաար Քննարկած Են Հայաստան-Եւրոպական Միութիւն Վերաբերող Հարցեր



Վարչապետ Նիկոլ Փաշինեանի ԵՄ յատուկ ներկայացուցիչ Թոյվօ Քլաարի հանդիպումը

Վարչապետ Նիկոլ Փաշինեան ընդունած է Հարաւային Կովկասի ու Վրաստանի ճգնաժամի հարցերով ԵՄ յատուկ ներկայացուցիչ Թոյվօ Քլաարը: Հանդիպման ներկայ եղած է նաեւ Հայաստանի մէջ Եւրոպական Միութեան պատուիրակութեան ղեկավար, դեսպան Անտրէաս Վիքթորինը:

Զրուցակիցները քննարկած են տարածաշրջանին մէջ ստեղծուած իրավիճակին, ինչպէս նաեւ Հայաստան-Եւրոպական Միութիւն համագործակցութեան վերաբերող հարցեր:

Կարեւորուած է հայ-ատրպէյճանական սահմանին Եւրոպական Միութեան նոր քաղաքացիական առաքելութեան տեղակայման վերաբերեալ ընդունուած որոշումը, ինչ որ պիտի նպաստէ տարածաշրջանին մէջ կայունութեան եւ անվտանգութեան: Անդրադարձ կատարուած է նաեւ Լաչինի միջանցքի արգելափակման հետեւանքով Լեռնային Ղարաբաղի մէջ ստեղծուած մարդասիրական ճգնաժամին:

Վարչապետ Փաշինեան ընդգծած է, որ անոր հետեւանքով Լեռնային Ղարաբաղի մէջ ստեղծուած իրավիճակը օրէ օր աւելի կը ծանրանայ ու կը սրի, չեն գործեր դպրոցներն ու մանկապարտէզները, առողջապահական հիմնարկները ունին դեղո-

րայքի խիստ պակաս եւ կանգնած են լրջագոյն խնդիրներու առջեւ: Բացի անկէ, Ատրպէյճանի կողմէ դադրեցուած է Լեռնային Ղարաբաղի կազմատակարարումը, առկայ է նաեւ էլեկտրականութեան մատակարարման խնդիր: Կարեւորելով ստեղծուած իրավիճակին միջազգային հանրութեան հասցեական արձագանգը՝ Նիկոլ Փաշինեան գոհունակութեամբ ընդգծած է օրերս Եւրոպական խորհրդարանին կողմէ ընդունուած բանաձեւերու փաստը:

Թոյվօ Քլաարը մտահոգութիւն յայտնած է Լաչինի միջանցքի արգելափակման առնչութեամբ եւ ընդգծած է միջանցքի անխափան գործունէութեան անհրաժեշտութիւնը: Ան նշած է, որ ԵՄ-ն շահագրգիռ է տարածաշրջանին մէջ կայունութեան եւ խաղաղութեան ապահովմամբ եւ պիտի շարունակէ նպաստել այդ խնդիրը լուծման:

Կողմերը միտքեր փոխանակած են Եւրոպական Միութեան նոր քաղաքացիական առաքելութեան տեղակայման գործընթացին, ինչպէս նաեւ Հայաստանի մէջ իրականացուող հաստատութեան քարտեզագրման գործընթացին: ՀՀ-ԵՄ համատեղ ծրագրերն են թացքին շուրջ:

Արարատ Միրզոյեան ՆԱԹՕ-ի Գլխաւոր Քարտուղարին Ներկայացուցած Է Լաչինի Միջանցքը Արգելափակելու Հետեւանքները

Հայաստանի արտաքին գործերու նախարար Արարատ Միրզոյեանը Յունուար 23-ին հանդիպած է ՆԱԹՕ-ի գլխաւոր քարտուղար Ենս Սթոլթենպերկի հետ:

Հանդիպման ընթացքին կողմերը միտքեր փոխանակած են ընդհանուր հետաքրքրութիւն ներկայացնող տարածաշրջանային եւ միջազգային ավտանգութեան հարցերու շուրջ:

ՀՀ արտաքին գործերու նախարարը ՆԱԹՕ-ի գլխաւոր քարտուղարին ներկայացուցած է Ատրպէյճանի կողմէ Լաչինի միջանցքի ապօրինի արգելափակման հետեւանքով Լեռնային Ղարաբաղի մէջ ստեղծուած մարդասիրական ճգնաժամը, ատրպէյճանական իշխանութիւններու՝ Լեռնային Ղարաբաղը ցեղային գտման ենթարկելու շարունակական քաղաքա-

կանութեան հետեւանքները: Այս ծիրին մէջ ընդգծուած է միջազգային հանրութեան յստակ գործողութիւններու կարեւորութիւնը՝ Լեռնային Ղարաբաղի անմարդկային պաշարումը վերացնելու եւ Ատրպէյճանը բանակցութիւններու սեղան վերադարձնելու նպատակով:

Արարատ Միրզոյեանը Ենս Սթոլթենպերկին նաեւ ներկայացուցած է Հայաստան-Թուրքիա յարաբերութիւններու կարգաւորման գործընթացին մէջ առկայ զարգացումները:

Հանդիպման ընթացքին կողմերը գոհունակութիւն յայտնած են ՀՀ-ՆԱԹՕ քաղաքական երկխօսութեան մակարդակին առնչութեամբ, անդրադարձ կատարած են համագործակցութեան ներկայ ծրագրերն են ապագայ հեռանկարներուն:

ԵՄ-ն Նոր Քաղաքացիական Առաքելութիւն Կ'ուղարկէ Հայ-Ատրպէյճանական Սահման Երկու Տարի Ժամկետով

Եւրոպական խորհուրդը համաձայնութիւն ձեռք բերած է Հայաստանի մէջ Եւրոպական Միութեան քաղաքացիական առաքելութիւն ստեղծելու մասին՝ Անվտանգութեան եւ պաշտպանութեան ընդհանուր քաղաքականութեան ծիրին մէջ: Առաքելութեան նպատակն է նպաստել Հայաստանի սահմանամերձ շրջաններուն մէջ կայունութեան, այնտեղ վստահութիւն ձեւաւորելու եւ ապահովել Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ յարաբերութիւններու կարգաւորման ջանքերուն նպաստող միջավայր, ինչին կ'աջակցի Եւրոմիութիւնը: «Այս մասին յայտարարութիւն տարածած է ԵՄ խորհուրդը:

«Հայաստանի մէջ ԵՄ առաքելութեան ստեղծումը Հարաւային Կովկասի մէջ ԵՄ ներգրաւուածութեան նոր փուլ կը սկսի: ԵՄ-ն պիտի շարունակէ աջակցել ապամազցողութեան ջանքերուն եւ յանձնառու է սերտօրէն համագործակցելու երկու կողմերուն հետ՝ տարածաշրջանին մէջ կայուն խաղաղութեան վերջնական նպատակին հասնելու համար», ըսած է Եւրոմիութեան արտաքին քաղաքականութեան եւ անվտանգութեան հարցերով բարձր ներկայացուցիչ Ժոզեփ Գորէլը:

Պաքուն Վերահսկողութեան Մեխանիզմ Կը Պահանջէ Լաչին

Պաքուն կը հաստատեն, որ Ատրպէյճանը անցեալ շաբաթ Արցախի իշխանութիւններուն առաջարկութիւններու փաթեթ ներկայացուցած է, որոնք, սակայն, ընդունելի չեն եղած Ստեփանակերտի համար: Այդ մասին «Ազատութեան» ատրպէյճանական ծառայութեան ըսած է փորձագէտ Ֆարիտ Շաֆիբեյը, որ կը գլխաւորէ Ատրպէյճանի նախագահին հրամանագրով Պաքուի մէջ հիմնադրուած Միջազգային Յարաբերութիւններու Վերլուծութեան կեդրոնը: Ըստ Շաֆիբեյի, Պաքուն պահանջած է, որ Արցախի մէջ հանքերի շահագործումը դադրեցուցի, եւ վերահսկողութեան մեխանիզմ

Հաղորդագրութեան մէջ կը նշուի, որ ի պատասխան Հայաստանի խնդրանքին՝ Հայաստանի մէջ ԵՄ առաքելութիւնը կանոնաւոր պարեկութիւն պիտի իրականացնէ եւ պիտի գեկուցէ իրավիճակին մասին, որուն շնորհիւ ԵՄ-ն աւելի հիմնաւոր պատկերացում պիտի ունենայ այնտեղ իրավիճակին մասին: Առաքելութիւնը նաեւ պիտի նպաստէ Եւրոպական խորհուրդի նախագահ Շարլ Միշէլի գլխաւորած գործընթացի ծիրին մէջ միջնորդական ջանքերուն:

Հայաստանի մէջ ԵՄ առաքելութիւնը նախնական մանտաթ պիտի ունենայ երկու տարի ժամկետով: Առաքելութեան գործնական շտաբը պիտի ըլլայ Հայաստանի մէջ:

«Մենք ջերմօրէն կ'ողջունենք Հայաստան լիարժէք քաղաքացիական առաքելութիւն ուղարկելու ԵՄ որոշումը: Մենք մեր պատրաստակամութիւնը կը յայտնենք համագործակցելու առաքելութեան հետ եւ աջակցելու անոր գործունէութեան: Այս առաքելութիւնը պիտի նպաստէ տարածաշրջանին մէջ խաղաղութեան, կայունութեան եւ անվտանգութեան հաստատման», այս մասին իր թուիթըրեան էջով գրած է ՀՀ արտաքին գործերու նախարար Արարատ Միրզոյեանը:

Ռուսաստանը Կը Շարունակէ Բարդ Աշխատանք Տանիլ Ինչպէս Հայաստանի, Այնպէս Ալ Ատրպէյճանի Հետ Փետրով

Ռուսիան կը շարունակէ շատ տքնաջան եւ բարդ աշխատանք տանիլ ինչպէս Հայաստանի, այնպէս ալ Ատրպէյճանի հետ երկխօսութեան գործին մէջ: Այս մասին լրագրողներուն յայտնած է Ռուսիոյ նախագահի մամուլի քարտուղար Տմիթրի Փեսքով:

«Ռուսիան՝ որպէս երկու տարի առաջ ստորագրուած եռակողմ համաձայնագրերու եւ փաստաթուղթերու կողմէն մէկը, կը շարունակէ կատարել իր պարտաւորութիւնները եւ կը շարունակէ շատ ու շատ քրտնաջան եւ բարդ աշխատանք եւ Հայաստանի, եւ՛ Ատրպէյճանի հետ», նշած է Քրեմլինի ներկայացուցիչը՝ պատասխանելով այն հարցումին, թէ արդեօք Քրեմլինի մէջ համամիտ են ԱՄՆ պետական քարտուղար Էն-



Ռուսիոյ նախագահի մամուլի քարտուղար Տմիթրի Փեսքով

թընի Պլինքոնի կողմէն՝ ուղղուած Ատրպէյճանի նախագահ Իլհամ Ալիեւին՝ անյապաղ վերաբանալու Լաչինի միջանցքը առեւտրային երթեւեկութեան համար:

Ինչպես Պիտի ԸԼԼԱՆ Նոր Զօրանոցները



Իտալական արտադրութեան նոր գորանոցի մէկ մասը

Գեղարքունիքի մարզի Ազատ գիւղի գորամասի ճարտարապետական-սակրաւորային վաշտի կացարանը, ուր նախօրէին տեղի ունեցած էր պայթումը, որուն հետեւանքով գոհուած եւ վիրաւորուած են զինուորներ ու սպաներ, ժամանակաւոր էր: Այն նախատեսուած էր տուեալ շրջանին մէջ կեդրոնացման (տեղակայման) համար:

Տեղեկութիւնը «Հայկական ժամանակ»-ի հետ գրոյցին հաստատեց ՀՀ պաշտպանական գերատեսչութեան մամուլի քարտուղար Արամ Թորոսեանը:

Ինչպէս նաեւ միւս ստորաբաժանումներուն համար նախատեսուած է նոր իտալական ձեւաչափով գորանոցներու կառուցում՝ ժամանակակից չափանիշներուն համապատասխան:

Թորոսեանի խօսքով՝ մշտական տեղակայման վայրի կառուցման աշխատանքներուն աւարտը նախատեսուած է 2023 թուականի վերջը:

«Ամիսներ առաջ Պաշտպանութեան Նախարարութիւնը ձեռք է բերել իտալական արտադրութեան գորանոցներ, որոնց առաջին խմբաքանակը արդէն Հայաստանում է: Այս պահին ընթանում են տարածքի բարեկարգման, ճարտարապետական ցանցերի անցկացման աշխատանքներ, որից յետոյ կը կառուցուին», մանրամասնեց գերատեսչութեան մամուլի քարտուղարը:

ՀՀ Պաշտպանութեան Նախարարութիւնը նաեւ լուսանկարներ ու տեսանիւթ տրամադրած է, թէ բարձր չափանիշներուն համապատասխան գորանոցները ինչպիսին պիտի ըլլան, նաեւ՝ Հայաստան հասած խմբաքանակին լուսանկարը:

Տեղեկութիւնները նաեւ տեղացիներուն օգնութիւն հասցնելու կողմէն կարգաւորուած քայլերու կը ձեռնարկը բնիկ հայ բնակչութիւնը Արցախէն հեռացնելու եւ անոնց նախնիներու երկրին մէջ ազատ, ժողովրդավարական եւ արժանապատիւ ապրելու հնարաւորութենէն զրկելու համար՝ ցեղային գտնմաներու յստակ նշան, որ կարելի չէ անտեսել»:

Նամակին մէջ նաեւ ըսուած է. «Լաչինի միջանցքի վերաբացման ներկայ միջազգային ռազմավարութիւնը պարզապէս չի գործեր: Չնայած շրջափակման եւ անմեղ քաղաքացիներուն վրայ ունեցած ողբերգական ազդեցութեան յստակ փաստագրուած ապացոյցներուն, նախագահ Ալիեւ կը շարունակէ ստել ԱՄՆ-ին եւ միջազգային հանրութեան՝ յայտարարելով, որ շրջափակում չկայ: Տաղանապալի է նաեւ այն, որ Ալիեւ յայտնած է, որ Արցախէն մեկնելու ճանապարհը բաց է բոլոր անոնց համար, որոնք չեն փախաբեր դառնալ Ատրպէյճանի քաղաքացի: Ալիեւի վարչա-

Ալիեւի Կարգակարգը Քայլերու Կը Ձեռնարկէ Բնիկ Հայ Բնակչութիւնը Արցախէն Հեռացնելու ԱՄՆ Գոնկրեսականները Դիմած Են Պայտընին

Գոնկրէսի Հայկական Յանձնախումբի համանախագահները Պայտընի վարչակազմին կողմէն քննարկելու արտակարգ իրավիճակի մէջ օղային փոխադրումը Լեռնային Ղարաբաղ եւ պատժամիջոցներ կիրառելու Ատրպէյճանի իշխանութիւններուն նկատմամբ:



ԱՄՆ պետական քարտուղար Էնթոնի Պրինքընին եւ ԱՄՆ ՄԶԳ վարիչ Սամանթա Փաուլըրին ուղղուած նամակին մէջ, Գոնկրէսի Հայկական Յանձնախումբի համանախագահներ Ֆրենք Փալոնը, Կաս Պիլիբրաքիսը, Ատամ Շիֆը, Տէյլօր Վալատտոն եւ Աննա Էլուն կը նշեն. «Լաչինի միջանցքի վերաբացման ներկայ միջազգային ռազմավարութիւնը պարզապէս չ'աշխատիր: Ալիեւի վարչակարգը կանխամտածուած քայլերու կը ձեռնարկը բնիկ հայ բնակչութիւնը Արցախէն հեռացնելու եւ անոնց նախնիներու երկրին մէջ ազատ, ժողովրդավարական եւ արժանապատիւ ապրելու հնարաւորութենէն զրկելու համար՝ ցեղային գտնմաներու յստակ նշան, որ կարելի չէ անտեսել»:



Նամակին մէջ նաեւ ըսուած է. «Լաչինի միջանցքի վերաբացման ներկայ միջազգային ռազմավարութիւնը պարզապէս չի գործեր: Չնայած շրջափակման եւ անմեղ քաղաքացիներուն վրայ ունեցած ողբերգական ազդեցութեան յստակ փաստագրուած ապացոյցներուն, նախագահ Ալիեւ կը շարունակէ ստել ԱՄՆ-ին եւ միջազգային հանրութեան՝ յայտարարելով, որ շրջափակում չկայ: Տաղանապալի է նաեւ այն, որ Ալիեւ յայտնած է, որ Արցախէն մեկնելու ճանապարհը բաց է բոլոր անոնց համար, որոնք չեն փախաբեր դառնալ Ատրպէյճանի քաղաքացի: Ալիեւի վարչա-

կարգը կանխամտածուած քայլերու կը ձեռնարկէ բնիկ հայ բնակչութիւնը Արցախէն հեռացնելու եւ անոնց նախնիներու երկրին մէջ ազատ, ժողովրդավարական եւ արժանապատիւ ապրելու հնարաւորութենէն զրկելու համար: Մինչդեռ տարածաշրջանին մէջ տեղակայուած ռուս խաղաղապահները քիչ բան ըրած են միջանցքը փակող ատրպէյճանցիները ցրելու կամ իրավիճակը թուլցնելու համար»:

Գոնկրէսականները նաեւ տեղացիներուն օգնութիւն հասցնելու կողմէն կարգաւորուած քայլերու կը ձեռնարկէ բնիկ հայ բնակչութիւնը Արցախէն հեռացնելու եւ անոնց նախնիներու երկրին մէջ ազատ, ժողովրդավարական եւ արժանապատիւ ապրելու հնարաւորութենէն զրկելու համար՝ ցեղային գտնմաներու յստակ նշան, որ կարելի չէ անտեսել»:

Ֆացի անկէ, մենք կը կարծենք, որ այս շրջափակման ետին կանգնած իշխանութիւններուն դէմ այսպիսի պատժամիջոցներու կիրառումը, ինչպիսին է Մակնիթսքիի պատժամիջոցները, հիմնաւորուած է եւ տեղին՝ հաշուի առնելով այն լուրջ վտանգը, որուն ներկայ պահին կը բախի Արցախի ժողովուրդը»:

Եւրոպական Խորհրդարանի Փաստաթուղթը

Շարունակուած էջ 1-էն

գործութիւնները ու անմարդկային վերաբերմունքի կապակցութեամբ եւ կոչ է անում ատրպէյճանական իշխանութիւններին՝ ազատել իրենց հակողութեան տակ գտնուող ռազմագերիներին: Ընդգծում է, որ Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ համապարփակ խաղաղութեան պայմանագիրը պէտք է հասցեագրի հակամարտութեան արմատական պատճառները, ներառեալ՝ Լեռնային Ղարաբաղում ապրող հայ բնակչութեան իրաւունքներն ու անվտանգութիւնը, տեղահանուած անձանց ու փախստականների վերադարձը, մշակութային, կրօնական ու պատմական ժառանգութեան պաշտպանութիւնն ու պահպանումը, ինչպէս նաեւ տարածքային ամբողջականութիւնը: Ողջունում է Ատրպէյճանի հետ Հայաստանի սահմանին Եւրոմիութեան քաղաքացիական առաքելութեան տեղակայութիւնը եւ կոչ է անում Եւրոմիութեան Խորհրդին՝ ընդլայնել տեղակայուած փորձագէտների քանակը, աւելացնել առաքելութեան կարողութիւնները, ամրապնդել ներկայութիւնը տարածաշրջանում: Խստօրէն դատապարտում է Ատրպէյճանի կողմից Լաչինի միջանցքի ապօրինի շրջափակումը, որը 2020 թուականի Նոյեմբերի 9-ի եռակողմ յայտարարութեան խախտում է, քանի որ այն կարող է ստեղծել կանխամտածուած մարդասիրական ճգնաժամ՝ Լեռնային Ղարաբաղի

ժողովրդի համար: Պահանջում է Ատրպէյճանի իշխանութիւններին անջապաղ վերականգնել Լաչինի միջանցքով ազատ տեղաշարժը: Յիշեցնում է, որ միայն դիւանագիտական միջոցներով է հնարաւոր հասնել արդար եւ տեւական կարգաւորման՝ յօգուտ Հայաստանի եւ Ատրպէյճանի բնակչութեան:

Այս փաստաթուղթն ընդունուել է 407 կողմ, 92 դէմ, 142 ձեռնպահ ձայների յարաբերակցութեամբ: Պիտի ընդգծեմ, որ այս փաստաթուղթը միայն Հայաստանի մասին չէ, այն շատ ծաւալուն փաստաթուղթ է, 92-ից 99-ը կէտերը վերաբերում են Հայաստանի Հանրապետութեանը, Լեռնային Ղարաբաղին, մեր տարածաշրջանին:

Ընդունուած փաստաթուղթը շատ կարեւոր է այն առումով, որ ըստ էութեան արտայայտում է առարկայական իրականութիւնը, եւ պէտք է նաեւ այս առումով շնորհակալութիւն յայտնեմ Եւրոպական Խորհրդարանի պատգամաւորներին, Հայաստանի Հանրապետութեան մեր այն գործընկերներին, ովքեր շարունակական, հետեւողական աշխատել են առարկայական տեղեկատուութիւնը Եւրոխորհրդի պատգամաւորներին եւ մեր գործընկերներին հասցնելու ուղղութեամբ: Մենք պէտք է շարունակենք մեր ջանքերն այս ուղղութեամբ եւ, ի վերջոյ, հասնենք հռչակուած քաղաքական օրակարգի իրականացմանը», ըսաւ Հայաստանի վարչապետը:

Պլինքըն Ալիեւին Կոչ Ըրած Ե

Շարունակուած էջ 1-էն

կայացուցած է, որ ռուս խաղաղապահներու եւ կարմիր խաչի Միջազգային կոմիտէի ինքնաշարժները այս ընթացքին այնտեղով անցած են: Ալիեւ ընդգծած է, որ պէտք է դադարեցնել հանքավայրերու «անօրինական շահագործումը Ատրպէյճանի այն տարածքներուն մէջ, ուր ժամանակաւորապէս տեղակայուած են ռուս խաղաղապահները»: Միեւնոյն ժամանակ, ըստ անոր, այնտեղ պէտք է ապահովուին Ատրպէյճանի կողմէ մշտական վերահսկողութիւն եւ ստուգումներ: Բացի անկէ, Ալիեւ յաւելած է, որ «հայաստանեան ականները ապօրինի տեղափոխուած են Լաչինի ճանապարհով»:

Ատրպէյճանի նախագահը նաեւ նշած է, որ Պաքոն հաւատարիմ է խաղաղութեան գործընթացին եւ Հայաստանի ու Ատրպէյճանի միջեւ յարաբերութիւններու կարգաւորման, որ պէտք է պարունակէ միայն երկկողմ յարաբերութիւններու կարգաւորում՝ «հիմնուած միջազգային իրաւունքի կանոններու եւ սկզբունքներու եւ Ատրպէյճանի կողմէ ներկայացուած հինգ սկզբունքներուն վրայ»:

Պլինքըն նաեւ Հայաստանի վարչապետին հետ հեռախօսազրոյց ունեցած էր քանի մը օր առաջ: Անկէ յետոյ ԱՄՆ պետական քարտուղարը թուիթըրեան գրառում կատարած էր, թէ Փաշինեանի հետ խօսած է Ատրպէյճանի հետ երկկողմ խաղաղ քննարկումները վերսկսելու քայլերուն մասին:

Ռուբէն Վարդանեանը Հարցազրոյց Տուած է «France 24» Հեռուստարձկերուծեան



Արցախի Հանրապետութեան պետական նախարար Ռուբէն Վարդանեանը հարցազրոյց տուած է ֆրանսական հեղինակաւոր «France 24» հեռուստարձկերուծեան՝ ներկայացնելով իրավիճակը Արցախի մէջ: Ատրպէյճանի կողմէ Արցախի շրջափակման ընթացքին սա Արցախի պետական նախարարին երկրորդ հարցազրոյցն է այս հեռուստարձկերուծեան:

Պատասխանելով հարցին, թէ ի՞նչ կրնայ ընել եւ ինչպէս կրնայ օգնել Եւրոմիութիւնը՝ Ռուբէն Վարդանեան նշած է, որ Եւրոպան կրնայ Ալիեւի վարչակարգին վրայ ճնշում գործադրել, բացատրել թէ ինչ պատժամիջոցներ կրնան կիրառուիլ անոր դէմ եւ ցոյց տալ, որ անընդունելի է 120 հազար մարդ, 30 հազար երեխայ ձմրան պայմաններուն մէջ զրկել ջեռուցումէ:

«Եւրոպացիները պէտք է ճնշում գործադրէին եւ ասէին, որ սա անընդունելի է, որ իրեն Տաւոս չեն հրաւիրի եւ ինքն այդ քաղաքակրթութեան մաս չի կազմի: Կարող են օդային միջամտութիւնները կարողանան Ստեփանակերտում վայրէջք կատարել եւ բերել մեզ այդքան անհրաժեշտ պարէն ու դեղորայք: Նաեւ կարծում եմ, որ այս պատմութիւնն աւարտելու լաւագոյն ձեւը կը լինի Արցախը որպէս անկախ պետութիւն ճանաչելը: Որովհետեւ Ատրպէյճանը չի կարողանում բնական

կեանքի պայմաններ ապահովել ոչ միայն հայերի, այլ նոյնիսկ իր ժողովրդի համար: Ներկայիս իրավիճակը եւս մէկ անգամ ապացուցում է, որ հնարաւոր չէ ապրել Ատրպէյճանի կազմում, որտեղ այդքան ճնշում եւ այդքան յարձակումներ են լինում քաղաքացիական բնակչութեան նկատմամբ»:

Ի պատասխան հարցին, թէ ինչպէս շրջափակման կը դիմանայ Արցախի ժողովուրդը՝ պետական նախարարը նկատած է, որ չնայած այս բոլոր դժուարութիւններուն, մարդիկ ամուր են. «Նրանք ասում են, որ քանի որ պայքարում են իրենց անկախութեան համար, պատրաստ են մնալ եւ ցոյց տալ խիզախութիւնը եւ տուրք չտալ ճնշումներին: Ժողովուրդը հասկանում է իրավիճակը եւ ընդունում է, որ դժուար ժամանակաշրջան է, որը շարունակութիւնն է այն պատերազմի, որ 2020 թուականի Նոյեմբերի 9-ին չէր աւարտուել: Ուստի մարդիկ այստեղ պատրաստ են պայքարել՝ չնայած այս բոլոր ճնշումներին»:

«France 24»-ի այն հարցին, թէ որո՞ւն ձեռքն է լուծման եւ Լեռնային Ղարաբաղի ժողովուրդի տառապանքներուն վերջ դնելու բանալին, Ռուբէն Վարդանեան ըսած է, որ այս բոլորին հիմնական «շահառուն» Ալիեւի վարչակարգն է, որովհետեւ արտաքին թշնամի ունենալը թոյլ կու տայ

պահել իր վարչակարգը. «Չմոռանանք, որ տասնամեակներ շարունակ երկիրը ղեկավարում է մէկ ընտանիք: Ուստի երկրի ներսում միասնականութիւն պահելու համար միակ միջոցը արտաքին թշնամի ունենալն է, ուստի միշտ կարելի է օգտագործել սեփական ժողովրդին պնդացնելու համար: Այդ իսկ պատճառով՝ բանալին Ատրպէյճանի ժողովրդի ձեռքում է, որովհետեւ նրանց երեխաներն են մահանում պատերազմի ժամանակ, իրենք աղքատ են՝ չնայած որ այդքան նաւթ եւ կազ ունեն: Իսկ միջազգային քաղաքակիրթ հանրութիւնը պէտք է բացատրի, որ սա անընդունելի է: Ֆրանսան, Ռուսաստանը, ԱՄՆ-ը, Իրանը, Թուրքիան մեծ խաղացողներ են, սակայն, վերջ ի վերջոյ, մեր նպատակն ու պատասխանատուութիւնն է ցոյց տալ նպատակասլացութիւն եւ խիզախութիւն՝ պաշտպանելու մեր անկախութիւնը: Մի օր Ատրպէյճանը պէտք է հասկանայ, որ կողք-կողքի ապրելու միակ ձեւը հարեւաններ լինելն է եւ ոչ թէ Ատրպէյճանի մաս կազմելը»:

Արցախի պետական նախարարը նկատած է նաեւ, որ Եւրոպան կը շարունակէ Ատրպէյճանի հետ առեւտրային գործունէութիւնը՝ ընդունելով մենատիրական վարչակարգը, որ կը փորձէ քանդել Արցախի պէս ժողովրդավարական երկիրը: Ան այդ մէկը համարած է «մեծ խաղացողներէն շատերու երկակի չափանիշերու օրինակ»:

«Ռուսաստանը, Եւրոպան, ԱՄՆ-ը կարող են մեծ դերակատարում ունենալ: Ֆրանսան այն բացառիկ երկրներից մէկն է, որ շրջափակման առաջին իսկ օրից սատար է կանգնել Արցախի հայերին: Ուզում եմ շնորհակալութիւն յայտնել դրա համար: Կարծում եմ, որ Ռուսաստանը, Ֆրանսան եւ ԱՄՆ-ը պէտք է վերադառնան Մինսքի խմբի սեղանի շուրջ եւ փորձեն երեք կողմից ճնշում գործադրել Ատրպէյճանի վրայ», ըսած է Ռուբէն Վարդանեանը:

Եւրոպական Աճող Հետաքրքրութիւնը՝ Հայաստանով

Շարունակուած էջ 1-էն

Ներ ժամանած էին Հայաստան եւ անկէ ետք դադրած էին ազերի բանակի ամէնօրեայ սադրիչ գործողութիւնները Հայկական դիրքերու եւ գիւղերու ուղղութեամբ:

Այս բոլորը տակաւին բաւարար չեն զսպելու համար Ալիեւի պիտոյակները: Ժամանակն է դիմելու գործնական քայլերու, սկսելով Ատրպէյճանի եւ Եւրոպայի միջեւ կնքուած կազմատակարարման խնդրայարոյց պայմանագիրը խզելով: Այս համաձայնութիւնը գոյացած էր երբ Եւրոպական երկիրները ցուրտ եղանակին պատրաստուելու համար կը փորձէին կազի մատակարարման այլընտրանքային աղբիւրներ փնտռել՝ Ռուսաստանի հետ տնտեսական կապերու խզումէն ետք: Այսօր, Եւրոպան սկսած է յաղթահարել ձմրան եղանակի իր կարիքները, շնորհիւ աւելի բարենպաստ եղանակին եւ Միացեալ Նահանգներէն եւ Արաբական ծոցի երկիրներէն ստացած կազի պաշարներուն: Եւրոպական Միութիւնը բարոյական պարտաւորութեան տակ է՝ փակելու Ալիեւի բռնատիրական ռեժիմի եկամուտի աղբիւրները.

թէկուզ նուազագոյն չափով: Վերջին շրջանի Պաքուի գործողութիւնները եւ յատկապէս Լաչինի միջանցքի փակումը զինք դրած են անել կացութեան առջեւ: Առանց Հայկական կողմէն զիջումներ ապահովելու ետք քայլ կատարելը անոր համար պիտի ըլլայ խոշոր պարտութիւնը, իսկ Արցախահայութիւնը կը մերժէ պատուաւոր ելքի ճամբայ տալ Ալիեւին: Արցախի շրջափակումը եր մարդասիրական տագնապի շարունակութիւնը Ատրպէյճանը պիտի մատնէ ամբողջական մեկուսացման:

Եւրոպական կառոյցներու վերջին քայլերը դրական են Հայաստանի ու Արցախի համար: Պէտք է շարունակել Ատրպէյճանի վրայ ճնշումները մինչեւ որ ան հասկնայ թէ ժողովրդավար Հայաստանը եւս ունի իր բարեկամները, որոնք պատրաստ են անոր կողքին կանգնելու:

Եւրոպացիներու աճող հետաքրքրութիւնը Հայաստանով ու անոնց մուտքը Կովկաս կրնայ նոր իրավիճակներու առջեւ դնել տարածաշրջանը:

Գ. ԽՈՏԱՆԵԱՆ «ՄԱՍԻՍ»

Հրդեհէն Չոհուած է 15 Զինուոր

Շարունակուած էջ 1-էն

ներու եւ անոնց կանխարգիլման մասին», որուն մէջ յստակ հրահանգաւորած է, թէ ինչ պէտք է ընել հակահրդեհային կանոնները պահպանելու համար:

«7-րդ կէտում նշում է՝ խստիւ արգելել վառարանների շահագործման համար որպէս կազան պեղզին, նեֆրազ եւ այլ տեսակի դիւրավառ հեղուկների օգտագործումը, դրանք պահպանել այլ հեղուկներից առանձին: Սա գինուորական բարձրաստիճան պաշտօնեայի տուած հրամանն է, եւ այս հրամանի պարզ պահպանումը թոյլ կը տար չունենալ այս դէպքը», ընդգծեց Փաշինեան՝ յաւելելով, որ վառարանը վառելու համար յատուկ այրիչներ բաժանուած են, որպէսզի լրացուցիչ միջոցներու կարիք չըլլայ:

Վարչապետը յայտնեց, որ նախկինական տուեալներով՝ զօրամասի ճարտարապետական-սակրաւորային վաշտի կացարանին մէջ փորձ կատարուած է պեղզիներ օգտագործել վառարանը վառելու համար:

Պաշտպանութեան նախարար

Սուրէն Պապիկեան իր հերթին գեկուցեց, որ վարչապետի յանձնարարականին մասով ինչ աշխատանքներ իրականացուած են:

«Զբաղեցրած պաշտօններից ազատուել են 2-րդ բանակային զօրամասի շտաբի պետը, թիկունքի պետը, զօրամասի հրամանատարի տեղակալը մարտական հերթապահութեան գծով, «N» զօրամասի շտաբի պետ, հրամանատարի տեղակալ թիկունքի գծով, «N» զօրամասի ճարտարապետական ծառայութեան պետ, «N» զօրամասի ճարտարապետական-սակրաւորային վաշտի հրամանատար եւ գինուած ուժերի թիկունքի վարչութեան, հրդեհային անվտանգութեան ծառայութեան պետը», ըսաւ Պապիկեան:

Պաշտպանութեան նախարարին խօսքով՝ անոնց զբաղեցուցած պաշտօնները ինչ-որ կերպ կ'առնչուին դէպքին:

«Հետագայում քրէաիրաւական գնահատական պէտք է տրուի, ուստի նրանց հետագայ պաշտօնավարումը նպատակայարմար չէ», եզրափակեց Պապիկեան:

Ազատ Գիւղի «Ձօրամասը» Միակը Զէ.

Շարունակուած էջ 2-էն

Սեպտեմբերի յարձակումից յետոյ: Այս տների սեփականութեան իրաւունքի վերաբերեալ տեղեկութիւնները եւս չենք հրապարակում՝ անվտանգութեան նկատառումներից ելնելով:

Այսպիսով փաստենք, որ Ազատ գիւղի յայտնի կացարանը միակը չէ, որը գտնուած է այդ վիճակում: Կան նմանատիպ բազմաթիւ տներ,

որտեղ իրենց ծառայութիւնն են իրականացնում գինուորները: Այստեղ չեն պահպանուած հակահրդեհային, սանիտարական, անվտանգութեան կանոնների մեծ մասը, չկան անհրաժեշտ ենթակառուցուածքներ եւ կենցաղային պայմաններ: Չկան վթարային ելքեր, պատուհանները ճաղերով փակուած են եւ այլն:

«ՓԱՍՏԵՐՈՒ ՍՏՈՒԳՄԱՆ ՀԱՐԹԱԿ»

Ձեր Ծանուցումները Վստահեցէք
«Մասիս» Շաբաթաթերթին
Massis2@earthlink.net (626) 797-7680

Մոսկուան Զոհաբերեց Հայաստանը, Ժամանակն է Նոր Դաշնակիցների Փնտռելու. Հարցազրույց Ֆրանսահի ՍԴԴԿ-ի Վարիչ Սարմնի Ատենապետ ԸՆԿ. Սարո Մարտիրեանի Հետ



Հարցազրույց Սոցիալ-դեմոկրատ հնչակեան կուսակցութեան Ֆրանսայի վարիչ մարմնի առաջնորդ եւ Ալֆորվիլի փոխքաղաքապետ Սարո Մարտիրեանի հետ:

-Պարոն Մարտիրեան, վերջերս Ֆրանսայի Սենատը բանաձեւ է ընդունել յօգուտ Ատրպեյճանի ագրեսիւ քաղաքականութեան դատապարտման եւ կոչ է անում ճանաչել Արցախը որպէս անկախ պետութիւն, ինչպէ՞ս էք գնահատում այս զարգացումը:

-Շնորհակալ եմ ֆրանսացի սենատորներին, ովքեր 2022 թուականի Նոյեմբերի 15-ին մեծ մեծամասնութեամբ (332 ընտրողներից 295 կողմ) քուէարկեցին դիկտատոր Ալիեւին դատապարտող բանաձեւը:

Հազուադէպ է, որ երկրի խորհրդարանականներն իրենց դիրքերում այդքան հեռուն են գնացել:

Ատրպեյճանը կոչուում է ագրեսոր, իսկ Թուրքիան՝ մեղսակից: Անցել են այն ժամանակները, երբ ագրեսորներին եւ յարձակման ենթարկվածներին իրար հետեւից ուղարկում էին:

Սենատի այս բանաձեւը հակադրում է «Quai d'Orsay»-ի, Ֆրանսայի արտաքին գործերի նախարարութեան չզոքութեան ամօթալի դիրքորոշմանը եւ եւրալանձնաժողովի նախագահ Ուրսուլա Ֆոն դեր Լեյենի ինքնագոհ դիրքորոշմանը, ում համար հայի կեանքն է. ուղբանացիկից աւելի քիչ արժէք, քանի որ ատրպեյճանական գազը, ըստ նրա, աւելի մաքուր կը լինէր, քան ուսական գազը:

Սենատորների բանաձեւը նույնիսկ հասնում է նրան, որ ՄԱԿ-ի Անվտանգութեան խորհրդին հրաւիրում է բռնազանձել Հայաստանի Հանրապետութեան ինքնիշխան տարածքի վրայ Ատրպեյճանի ագրեսիայի վերաբերեալ Միջազգային քրէական դատարանը, ներառեալ զանգուածային յանցագործութիւնները եւ ռազմական յանցագործութիւնները հետաքննելու համար.

Բանաձեւը յտակօրէն պահանջում է Ֆրանսայի կողմից Արցախի Հանրապետութեան ճանաչումը, միայն անկախութիւնը կարող է երաշխաւորել նրա հայ բնակչութեան ազատութիւնն ու անվտանգութիւնը:

Բանաձեւը կոչ է անում տեղակայել կապույտ սաղաւարտներ եւ խնդրում է Ֆրանսայի կառավարութեանը ուժեղացնել Հայաստանի պաշտպանունակութիւնը՝ ապահովելու նրա տարածքային ամբողջականութիւնը:

Ղախակները: Այսինքն՝ գէնք է խնդրում Հայաստանին իր ինքնապաշտպանութեան համար:

-Վերջին շրջանում բազմաթիւ վերլուծութիւններ յուշում են, որ Ֆրանսան կարող է լինել Հայաստանի դաշնակիցը, ի՞նչ կարծիքի էք:

-Ես անկեղծօրէն յուսով եմ, որ այդպէս է, բայց օբիեկտիւօրէն չեմ տեսնում, թէ ինչ շահագրգռութիւն կ'ունենայ Ֆրանսան իրականացնելու այն ամէնը, ինչին կոչ է անում Սենատի բանաձեւը:

Խնդիրն այն է, որ պատմութիւնը մեզ սովորեցրել է հաւատալ Ֆրանսայի անկեղծ խօսքերին, բայց նաեւ սովորեցրել է մեզ յանձնուել մեր ճակատագրին:

Մեզ պէտք են գործեր, ոչ թէ խօսքեր, նոյնիսկ եթէ դա նշանակալի դիւանագիտական եւ բարոյական աջակցութիւն է:

-Ինչպէ՞ս էք տեսնում Մոսկուայի քաղաքականութիւնը Հայաստանի նկատմամբ: Թուում է, թէ անցած առնուագն 3 եւ 4 տարիների ընթացքում նա լիովին դիրքորոշում է ընդունում յօգուտ Ատրպեյճանի:

-Մոսկուայի խաղն օրէջոր ծաւալում է, դժուար է չտեսնել, որ Փութինը զոհաբերեց Հայաստանը, որպէսզի կարողանայ պատերազմել Ուքրանիայում:

նարկութեան Գալուցիւթի վարչութեան պատասխանատուներէն՝ Տոքթ. Կարօ Հարմանտայեան, իր ելոյթին մէջ համապարփակ տեղեկութիւններ տուաւ 4090-ի մարդասիրական ազգօգուտ ծառայութիւններուն մասին որ է՝ Արցախի 44 օրուան պատերազմի մասնակցած ուսումնատենչ, երիտասարդներուն գործնական աջակցութիւն ցուցաբերել, շարունակելու համար իրենց մասնագիտական ծրագիրը:

«4090» Հիմնարկութեան առա-



ջելութեան եւ առաջադրանքներուն մասին առաւել մանրամասնօրէն գեղեցեց յատկապէս սոյն ձեռնարկին համար Հայաստանէն ժամանած վերոյիշեալ կազմակերպութեան գործադիր տնօրէնուհի Իրինա Փէշկէօթեանը: Այս առթիւ իմացանք որ Հայաստանի մէջ եւս, դրամաշաղկապ կը կազմակերպուի խոստմնալի եւ ուսումնատենչ հաշմանդամ երիտասարդներուն կրթական ստանդարտները արամադրելով: Արդարեւ, անոնցմէ շատեր, մասնագիտական ուսում ստացած են նաեւ Եւրոպական համալսարաններու մէջ եւ վերադարձած Հայաստան:

Ժողովրդական շնորհալի երգիչ Դաւիթ Սամուէլեան խանդավառեց մթնոլորտը, իր հայրենական եւ միջազգային սիրուած երգերով, ընկերակցութեամբ Արամ Լէփէճեանի, արժանանալով ներկաներու որոտըստ ծափահարութիւններուն:

Ոգելորատուած մթնոլորտի ներքեւ տեղի ունեցան սրտաբուխ նուիրատուութիւններ, ինչպէս նաեւ՝ արժէքաւոր իրերու աճուրդ եւ վիճակահանութիւն:

Համէլի եւ օգտակար երեկոյթ մըն էր, որուն համար կը շնորհակարտեմք կազմակերպիչները, մաղթելով նորանոր յաջողութիւններ:

Մելգոնեան Կրթական Հաստատութեան 100-Ամեակին Ընդառաջ Մելգոնեան Բարերարներու Տօնը



ԴՈՎՏ. ՄԻՆԱՍ ԳՈՃԱՅԵԱՆ

Մելգոնեան Կրթական Հաստատութիւն (այսուհետեւ՝ ՄԿՀ, Կիպրոս) չաճախած իւրաքանչիւր սանսանուհիի համար առանձին խորհուրդ ունի Հայաստանեայց Առաքելական եկեղեցւոյ Ս. Յովհաննու Կարապետի տօնը: Այդ օրը հայ համայնքներէ ներս արմատներուն առաւել ամրութեամբ կառչած հայ աւանդական ընտանիքներու մէջ տօնն է Մկրտիչներու, Կարապետներու, Յովհաննէսներու (ճոն), իսկ մելգոնեանցիներուն համար՝ ԱՆՄԱՀ ԲԱՐԵՐԱՐՆԵՐ ԳՐԻԳՈՐ եւ Կարապետ Մելգոնեան եղբայրներու:

Մերունդներ յաջորդաբար այդ օրը կը մասնակցէին Սրբազան Պատարագին եւ հոգեպարար արարողութիւն կը կատարուէր եղբայրներու սրբալոյս դամբանին շուրջ:

Եւ այսպէս՝ 15 Յունուար 2023-ին, Գալիֆորնիայի Փասատինա քաղաքի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Հայց. Առաք. Եկեղեցւոյ մէջ մատուցուեցաւ հոգեհանգիստ, որուն յաջորդեց աւանդական հոգեճաշը: Մեր խորհրդածութիւնները այս առթիւ պիտի փափաքէինք յանձնել ոչ միայն բոլոր Մելգոնեանցիներուն, այլ բոլոր այն հայերուն, որոնք ունին միտք եւ խիղճ, «պճեղ մը անոյշ սիրտ», կաթիլ մը հայու արիւն եւ պատանիկ մը արժանապատուութիւն:

Շատեր գիտեն թէ 2005-ին անըմբռնելի որոշումով, իսկ ես պիտի ըսէի անլուրջ ու կամայական հրամանով մը փակուեցան Մելգոնեան Կրթական Հաստատութեան դռները: Հասցուած էր այնպիսի հարուած մը, որուն խարանդ զգաց իւրաքանչիւր Մելգոնեանցի եւ անոր բարեկամ ու հարազատ հայ մը: Նոյնիսկ ոչ հայեր՝ կիպրացի յոյն եւ անգլիացի մարդիկ մինչեւ օրս ափսոսանքով կ'արտայայտուին այս կաղնիին տապալումին առթիւ: Ի հարկէ միակ հրճուողը թուրքն է, որուն հացին իւր քսուեցաւ, որովհետեւ հայակերտման դարբնոց մըն ալ հեռացաւ իր սահմաններէն, որոնք Պատմական Հայրենիքի մեր սահմաններն են...:

Մենք տակաւին պիտի անդրադառնանք ՄԿՀ փակելու անհեռատես եւ ոչ-ՀԲԼՄ-ական որոշումին՝ առանց ինչպէս փաստերը:

Ուրախալին այն էր որ Բարերարներու օրուայ հրաւիրեալներուն ներկայութիւնը ցոյց կու տար Մելգոնեանցի տարբեր սերունդներու սրտցաւութիւնը, զիրար գտնելու եւ իրարմով լիանալու պահանջը,

չէ՞ որ անոնք իրենց կեանքի ամէնէն բախտորոշ շրջանը անցուցած էին նոյն յարկի տակ, զոյգ շէնքերու, Բարերարներու Դամբանի, զոյգ անտառներու, բարձրահասակ ջրամբարի, թէկուզ քարքարոտ բայց նոյն ֆութպոլի դաշտին մէջ: Չէ՞ որ անոնք այդ շրջաբակի Նվենիներու (եւկալիպտոս) ստուերներուն տակ շնչացած էին իրենց սրտի առաջին բաբախումները եւ թողուցած էին իրենց անուններուն սկզբնատուերը...

ՄԿՀ լուր դարձող մը չէր եղած, միայն կը թարան մը չէր, այլ կղզեակ մըն էր սիրոյ աստուածուհիի կղզիին մէջ, տաճար մըն էր բառիս ամէնէն լայն ընդգրկումով եւ սակայն, հեռաւոր Նիւ-Եորքի ինչ որ երկնաքեր շէնքի մը գրասենեակներուն մէջ կը թուրթուէր բաւական հեռու կեցած մարդիկ շուտիկօրէն որոշում կ'առնէին փակել՝ տեսակ-տեսակ անհետեւ ու անհամոզիչ պատճառաբանութիւններ մոգոնելով (հնարելով):

15 Յունուարի այս տօնակատարութեան ներկայ էր ՄԿՀ, չէր գոցուած ան, տակաւին ապրող յուշէր, թէկուզ մշուշի մէջ: Ամբողջ

սրահը կը բուրէր ՄԿՀ-ով: Հոն էին երանաշնորհ ուսուցիչները, տաղանդաւոր մարզիկները, օտար վարժարաններու հետ մրցումներէն յաղթական վերադարձող տղաքն ու աղջիկները... Մենք չզգագինք թէ մեր հաստատութենէն հազարաւոր մղոններ անդին կը գտնուէինք եւ այս էր մեր յաղթանակը, գոր պէտք է վերածել ՆՈՐ ՅԱՂԹԱՆԱԿՆԵՐՈՒ:

Մելգոնեանցին գիտէ իր ստացածին դիմաց տալ եւ աւելին տալ: Եւ այսպէս Սանուցի ատենապետ Ռաֆֆի Յնծալեան իր բացման խօսքին մէջ կարճ գեկուցում մը տուաւ անցնող շրջանի գործունէութեան մասին, յիշելով նաեւ կարգ մը երախտագէտ Մելգոնեանցիներու կատարած բարեսիրական գործերը՝ տեսականացնելու համար Մելգոնեան Բարերարներու թողած աւանդը: Ապա անոր հրաւերով

ներուն մասին՝ Վանաձորի մէջ:

Օրուան աստղերն էին Տէր եւ Տիկ. Ասպետ եւ Այդա Փողարեանները, մին՝ Եթովպիացի, միւսը՝ Իրանէն, հանդիպել էին ՄԿՀ-ի պարարտ հողի վրայ, կազմեր էին տիպար ընտանիք, հայեցի ջերմ բոյն եւ քանի մը տարի առաջ արեան ձայնը, ես պիտի ըսէի՝ Բարերարներու ձայնը, զանոնք տարեր էր հիւսիսային Հայաստանի ԳՕՇ գիւղը:

Առաջին իսկ այցելութենէն մենք սիրահարեցանք այս գիւղին եւ անոր բնակիչներուն, ըսին անոնք իրենց ելուցքին մէջ, եւ որոշեցինք կեանքի նպատակ դարձնել Գօշը զարգացնելը, ոտքի կեցնելը, որովհետեւ ամէն ինչ կայ հոս՝ անտառ, լիճ, լեռներ, Ալպիական բնութիւն, զարգանալու եւ առաջ երթալու բուռն ցանկութիւն:

Այնուհետեւ Տէր եւ Տիկ Փո-



իրարու ետեւէ բարձրախօսին մօտեցան Պրն. Գէորգ Յակոբեան, որ յիշեց մեզմէ յաւէտ հեռացած արժանաւոր Մելգոնեանցիները, ի մասնաւորի նշելով նորոգ հանգուցեալ Փոլ Քուշարեանի կատարած նուիրեալ աշխատանքները ի խնդիր Մելգոնեանի գոյատեւման ու յուսալից մութեան՝ Սանուցի հիմնադիր անդամի եւ ատենապետի իր հազամանքով:

Երկարամեայ տնօրէն Պրն. Վարդգէս Գուրուջեան հանգամանօրէն գեկուցեց իր եւ կնոջ Ալիսի ջանքերով կատարած նուիրաբաշխումի երախտաշատ աշխատանք-

ղարեանները լուսապատկերներու ցուցադրութեամբ ներկայացուցին ամբողջովին վերափոխուած գիւղը, դպրոցականները, գիւղական սկուլմբը: Ժպիտ կայ աշակերտներուն դէմքին վրայ, երգ ու ծիծաղ, բարձրագոյն ուսում ստանալու բուռն ցանկութիւն եւ ամէնէն կարեւորը՝ վերադարձ գիւղ, հայրենի բնութիւն եւ կերտելու նոր ապագայ: Իմացանք նաեւ թէ հիմնովին նորոգուած սկուլմբը կոշուած է Գրիգոր եւ Կարապետ աղա Մելգոնեան եղբայրներու անունով: Ի

Շար.ը էջ 16

BINGO NIGHT PARTY

FRIENDS, FUN, PRIZES

COME JOIN US FOR A FUN AND EXCITING NIGHT




Ticket donation: \$30
Includes Plate of Falafel or Chicken Shawarma,
Soft Drink and **ONE** Round of **BINGO**.
FRIDAY, February 10, 2023
Starting at 7:30 P.M.

AEBU CENTER
Location: 1060 N Allen Ave. Pasadena, CA 91104
For more information, contact Karine (818) 324-0574

Կոստանդնուպոլսոյ Հայոց Պատրիարք Սահակ Բ.ի Պատմական Այցը Երուսաղէմ



Կոստանդնուպոլսոյ Ն.Ա.Տ. Սահակ Բ. Պատրիարք Հայրը ձեռնարկեց իր գահակալութեան շրջանի դէպի Ս. Երուսաղէմ անդրանիկ պաշտօնական այցելութեան: Նորին Ամենապատուութեան սոյն այցելութիւնը համընկնեցաւ Հին Տոմարով Սուրբ Ծննդեան տօնակատարութեան օրերուն:

Նոյն առթիւ Սուրբ Երուսաղէմ կ'այցելեն նաեւ Ստանպուլէն, Հայաստանէն եւ արտասահմանէն բազմաթիւ ուխտաւորներ:

Հոգեւոր Պետը, 17 Յունուար 2023, Երեքշաբթի առաւօտ Ստանպուլի Օդակայանէն մեկնեցաւ Սուրբ Երուսաղէմ, ուղեկցութեամբ՝ գաւազանակիր Արժ. Տ. Շիրվան ՔՏՆՅ. Միւրզեանի:

Սոյն այցելութեան ընթացքին Նորին Ամենապատուութեան շքախումբի մաս կը կազմեն Պատրիարքարանի Հրատարակութեան Բաժնի Տեսուչ՝ Հոգւ. Տ. Յովակիմ Աբղ. Սերովբեան, Աթոռանիստ Մայր Եկեղեցւոյ Երէջ՝ Հոգւ. Տ. Գասպար Աբղ. Կարապետեան, Պատրիարքական Փոխանորդ Արժ. Տ. Գրիգոր Աւ. ՔՏՆՅ. Տամատեան, Քահանայից Դասէն՝ Արժ. Տ. Նաթան ՔՏՆՅ. Արապեան,

Հարիպեան: Սոյն դիմաւորման հանդիսութեան մասնակցեցան նաեւ Ս. Երկրի յարանուանութեանց ներկայացուցիչները՝ Ասորի եպիսկոպոսը, Ղպտի Եկեղեցւոյ միաբաններ, Լատին եկեղեցւոյ Կիւսթոսը, ինչպէս նաեւ Իսրայէլի մօտ Հայաստանի Հանրապետութեան Լիազօր Դեսպանը: Հանդիսութեան կը մասնակցէր նաեւ Ս. Երկրի Հայ սկստներու խումբը:

Եաֆաջի դրան առջեւ Լուսարարապետ Սրբազան Հայրը բարի գալուստ մղթեց Նորին Ամենապատուութեան: Հոգեւորականներու թափօրը, սկստներու նուագի եւ ժողովուրդի ծափողջոյններով մեր Հոգեւոր Պետը առաջնորդեց Հայոց Վանք, ուր սկսաւ Հրաշափառի արարողութիւնը:

Հրաշափառ Սրբոց Յակոբեանց Մայր Տաճարի մուտքին երեք սարկաւազներ խոնկով ընդառաջ ելան Նորին Ամենապատուութեան եւ սկսաւ հոգեւորականաց դասու եւ դպիրներու երգեցողութիւնը: Նորին Ամենապատուութիւնը հանդիսաւորապէս մուտք գործեց



Արժ. Տ. Ներսէս ՔՏՆՅ. Այվազեան, եւ Արժ. Տ. Մելքոն ՔՏՆՅ. Փընարճեան:

Նորին Ամենապատուութիւնը թէլ Ավիվի Պէն Կուրիոն օդակայանին մէջ դիմաւորուեցաւ Երուսաղէմի Պատրիարքական Ս. Աթոռոյ Դիւանապետ՝ Հոգւ. Տ. Կորիւն Վրդ. Պաղտասարեանի կողմէ:

Մուտք Երուսաղէմ ժամը 13.30-ին Երուսաղէմի պատմական Եաֆաջի դրան առջեւ հաւաքուած էր հոգեւորականներու, ուխտաւորներու եւ ժողովուրդի մեծ բազմութիւն մը: Թափօրին կը գլխաւորէր Ս. Աթոռոյ Լուսարարապետ Գերշ. Տ. Սեւան Արքեպս.

Մայր Տաճար, ուր կանոնական ուխտի աղօթք կատարեց Ս. Գլխաղբի Մատրան մէջ:

Ապա դասի մէջ կատարուեցաւ կանոնական աղօթասացութիւն:

Աւարտին՝ Լուսարարապետ Սրբազան Հայրը բարի գալուստն ուղերձ արտասանեց, որու ընթացքին իր գոհունակութիւնը յայտնեց այն պարագային համար, որ Պոլսոյ Հայոց Պատրիարքը ուխտի կու գար Երուսաղէմ եւ Ս. Ծննդեան այս օրերուն կը գորակցէր Ս. Աթոռի զինուորեալ միաբանութեան:

Ի պատասխան սոյն ուղերձին՝ Նորին Ամենապատուութիւնը եւս իր սրտի խօսքը արտասանեց եւ

ըսաւ թէ ուրախ է Երուսաղէմ ըլլալով: Յայտնեց թէ Երուսաղէմը իրեն համար մասնաւոր իմաստ ունի, քանի երեք տարի որպէս միաբան ապրած ու ծառայած է այստեղ: Նոյն պատճառաւ դիտել տուաւ, որ Ս. Յակոբեանց Մայր տաճարին կամարներուն ներքեւ ինք զինք իր տան մէջ կը զգայ:

մեր Եկեղեցւոյ դարաւոր իրաւունքներու պահպանման: Մեր Հոգեւոր Պետը իր սէրն ու անկեղծ համակրանքը յայտնեց Ս. Աթոռի միաբանութեան ու Սաղիմահայ համայնքին:

Պոլսոյ եւ Երուսաղէմի Պատրիարքներու Հանդիպումը



Մեր Հոգեւոր Պետը յատուկ շնորհակալութիւն յայտնեց Հայ Երուսաղէմի Ն.Ա.Տ. Նուրհան Պատրիարք Հօր, որու տնօրինութեամբ իրականացաւ սոյն փառաւոր դիմաւորման հանդիսութիւնը: Պատրիարք Հայրը շեշտեց, որ այս փառքը մեր Եկեղեցւոյ ու ժողովուրդին փառքն է, քանի Ս. Քաղաքին մէջ Հայ Եկեղեցին համահաւասար իրաւունքներ ունի միւս մեծ եկեղեցիներու նման: Աշխարհի վրայ քիչեր գիտեն, թէ

Հրաշափառի արարողութեան յետոյ, Նորին Ամենապատուութիւնը շարականներու երգեցողութեամբ առաջնորդուեցաւ Պատրիարքարան, ուր դահլիճի մուտքին ողջաբուրուեցաւ Ս. Երուսաղէմի Ն.Ա.Տ. Նուրհան Պատրիարք Հօր հետ:

Այստեղ կարճ աղօթքէ եւ հիւրասիրութեան յետոյ, երկու Աթոռներու գահակալները ընդունեցին հիւրերու, ուխտաւորներու եւ Սաղիմահայերու աջակցութիւնը: Մեր Հոգեւոր Պետը սոյն



այստեղ կայ զինուորեալ միաբանութիւն մը, որուն իւրաքանչիւր անդամ իր կեանքը նուիրաբերած է Քրիստոսակոխ վայրերէ ներս

այցելութեան որպէս յիշատակ Հայ Երուսաղէմի Պատրիարքին նուիրեց ապակեայ խեթական ոճով թանկագին սրուակ մը:

The Armenian Academy at Blair,
an IB World School
1201 S. Marengo Ave., Pasadena

- FREE TUITION
- 6th-12th Grades
- Top Sports
- Both dialects and all levels welcomed.

2023-2024 School Year

For Information/Tours Sign up at www.ArmenianAcademy.org or contact **Maro Yacoubian** at 626-275-1330

ԱՆՈՒՆԱԿՈՂՈՒԹԻՒՆ ԵՏԱՐՆ ԵՕՔԸ ԱՆՈՒՆՆԵՐ ԸՆԾԱՅՈՒՄԸ ՏԻՐՈՉ ՅՈՒՆՈՒՄ 13

ԶԱԽԵՆ Ա. ՔՅՆ. ԱՐՁՈՒՄԱՆԵԱՆ

Յունուար 13, ութօրէքն է Սուրբ Ծննդեան, անշարժ թուական մը ինչպէս Յունուար 6, երբ Մանուկը անուանեցին ՅԻՍՈՒՍ համաձայն հրեշտակին իր մօր Մարիամին տուած աւետիսին: Անշարժ թուական պիտի ըլլայ նաեւ Փետրուար 14-ը երբ քառասորեայ Մանուկը Տաճար պիտի ընծայուի:

Յիսուս եղաւ առաջին անուանումը, որուն անմիջապէս կցուեցան Փրկիչն ու Օծեալը: «Օծեալ» ինչու՞նք թարգմանութիւնն է Քրիստոս՝ «գի ծնաւ ձեզ այսօր Փրկիչ որ է Օծեալ Տէր ի քաղաքի Դաւթի», ինչպէս կը կարգանք Ղուկասու Աւետարանին սկիզբը: Սկզբնական այս երեք անուանումները, Յիսուս, Քրիստոս, Փրկիչ, իրենց յատուկ բովանդակութեամբ տրուեցան, Յիսուս «որ պիտի փրկէ իր ժողովուրդը», եւ Քրիստոս «Աստուծոյ օծեալը», եւ «Փրկիչն աշխարհի» որ պիտի ազատէ մարդիկ իրենց մեղքերէն իր կեանքի գինով, արեան հեղմամբ խաչին վրայ, տէրը կանգնելով իր անուններուն:

Աւելի հիմնական անուն մը, նոյնիսկ իր ծնունդէն առաջ, Մարգարէներէն կուգայ եւ Աւետարանիչն ալ այդպէս նշած է, թէ Բեթղեհէմի ծնունդ Մանուկը էմանուէլ պիտի կոչուէր, որ երբայերէն լեզուով կը նշանակէ «Աստուած մեզ հետ», էլ-ը էլ-ը իսրայէլի (Աստուած), եւ էմանուէլ (մեզ հետ): Արաբերէն լեզուն եւ նոյն կոչումը կ'արձագանգէ «մաղանա» (մեզ հետ) «Ալլահ» (Աստուած): Այս անուանումը շատ յատկանշական է քանի որ Յիսուսի ծննդեամբ Աստուած յայտնուեցաւ եւ ոչ թէ միայն մանուկ Յիսուսը ծնաւ: Հայոց Եկեղեցին կը շեշտէ այս կէտը եւ միայն Ծնունդ չի կոչեր այս մեծ տօնը, այլ նաեւ Աստուածայայտնութիւն:

Այս չորս անունները, էմանուէլ, Յիսուս, Քրիստոս, Փրկիչ, սրբագործուեցան անուանակոչումով մը եւս, այս անգամ Հայր Աստուծոյ կողմէ Յիսուսի մկրտութեան պահուն, երբ «սա՛ է Որդին իմ սիրելի», ՈՐԴԻ ԱՍՏՈՒԾՈՅ բարձրագոյն անունով կոչելով գինք: Իր երեանամեայ աստուածային առաքելութեան շրջանին եւ մանաւանդ աւարտին Յիսուս այս անգամ ինք ինքզինք կոչեց նաեւ Որդի Մարդոց, զայն յատկացնելով իր մարդկային բնութեան, եւ երկուքին՝ աստուածային եւ մարդկային բնութիւններուն միացմամբ իր Անձին մէջ, աշակերտներուն յայտնելով վերջին դէպքերը՝ թէ ինչ պիտի պատահէր իր կեանքի վերջին օրերուն:

Յիսուս Քրիստոսի Համբարձումէն ետք նորակազմ Եկեղեցին Պօղոս Առաքեալի բերնով գինք անուանակոչեց եօթներորդ եւ լրացուցիչ անունով մը թէ ինքն է ՏէՐԸ, «անուն մը բոլոր անուններէն վեր»:

Էմանուէլ՝ Աստուած Մեզ Հետ Եբրայերէն արական յատուկ անուն որ երկու անգամ կրկնուած է Եսայի Մարգարէութեան մէջ (7:14 եւ 8:8) իր թարգմանութեամբ՝ «Աստուած մեզ հետ», եւ այն մեկնաբանութեամբ թէ Աստուած իր ներկայութիւնը ցոյց պիտի տայ իր



ժողովուրդի փրկութեան համար: Մարգարէութիւնը կատարուեցաւ Բեթղեհէմի Մանուկին ծնունդով որ կոչուեցաւ Յիսուս: Մտթէոս Աւետարանիչ կը հաստատէ զայն ըսելով թէ Եսայի մարգարէի բերնով ըսուած է թէ՛ «ահա կոչար պիտի յղանայ եւ որդի մը պիտի ծնի, եւ զայն պիտի կոչեն էմանուէլ որ կը թարգմանուի Աստուած մեզ հետ» (1:23):

Քրիստոնէական հասկացողութեամբ էմանուէլ անունը կը նշանակէ Աստուածայայտնութիւն: Ան նաեւ Քրիստոսի հետեւորդներուն վրայ կը թողու ծանր պարտաւորութիւն մը՝ եթէ Աստուած մեզ հետ է, արդեօ՞ք մենք ալ Աստուծոյ հետ ենք: Ծանրակշիռ պարագայ մըն է որ սակայն կարեւոր մասամբ իր քաղցր պատասխանն ունի Քրիստոսի Եկեղեցիին միջոցաւ: Ո՛րքան երջանիկ պէտք է զգայ Քրիստոնեայ աշխարհը որ Քրիստոսի մարմնաւոր ներկայութիւնը կը շարունակէ իրագործել իր հոգեւոր մարմնոյն՝ Եկեղեցիին միջոցաւ, այսինքն մեղսալից հաւատացեալներու ջերմեռանդ պաշտամունքով:

Յիսուս-Քրիստոս ՏէՐ ԲՈՂՈՐԻՆ

Ան որ մարդոց մեղքերը իր վրայ պիտի վերցնէր Խաչին վրայ, ինք ըլլալով միակ անմեղն ու Օծեալը ինչպէս գրած է Ղուկաս Աւետարանիչ (2:8-20): Փրկիչը Մեսիան պիտի ըլլար իր Օծեալ Քահանայապետի հանգամանքով, որովհետեւ օծեալը Հայր Աստուծոյ ընտրեալ Որդին էր միանգամայն:

Եզրափակիչ ՏէՐ անունը յայտնապէս տրուեցաւ Յիսուսի իր առաքելութեան աւարտին Համբարձումէն ետք որպէս փոխառեալ անուն Հին Կտակարանէն, եւ Յիսուսի ծննդեան պահուն իրեն տրուած ազդանշանէն: Այս անգամ Պօղոս Առաքեալի կողմէ հռչակուած անուանակոչում մը եղաւ իր նոր բովանդակութեամբ, երբ Առաքեալը հրաւիրեց նորադարձ քրիստոնէաները ճանչնալու Փրկիչը որպէս ՏէՐ եւ իբր այդպիսին պաշտելու գինք: Քանզի այդ անունին առջեւ, որ գերիվեր է ամէն անունէ, ամէն ոք պիտի ծնրադէր, երկրի վրայ եւ կամ երկնքի մէջ: ՏէՐ անունը անմիջապէս պաշտամունքի կեդրոնական տեղը գրաւեց Եկեղեցիներուն մէջ, ցոյց տալով որ ամէն քրիստոնէայ ենթարկուած կը մնայ Յիսուս Քրիստոսի որպէս ՏէՐ բոլորին, բոլոր պարագաներու ներքեւ: (Փիլիպեցոց 2:11):

ԱՐԵՒՄՏԵԱՆ ԹԵՆՂ ԴԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ Է ՊԱՏՐԱՍՏԵԼ «ԿԱՆՈՆԱԳԻՐՔ ԴԱՅՈՅ»-Ի ՆՈՐ՝ ՏԵՍԱԿԱՆՈՐԵԱԼ ԵՒ ԱՇԽԱՐԽԱՐՔԱՐ ՏԱՐԲԵՐԱԿԸ

Հայց. եկեղեցւոյ հետ առընչուած ամէն ոք քաջ գիտէ «Կանոնագիրք Հայոց» ժողովածուի եւ դրա չափազանց կարեւոր նշանակութեան մասին: Այն մեր եկեղեցւոյ հոգեւոր, ծիսական, բարոյական եւ բազմաթիւ այլ ոլորտները կարգաւորող իրաւական ժողովածու է: Բաղկացած է տարբեր դարերու սահմանուած եւ հաստատուած 57 կանոնախմբերից եւ 1332 կանոններից՝ սկսած առաքելական ժամանակներու հաստատուած կանոններից:

Մեր եկեղեցու ներքին կեանքը բոլոր առումներով կարգաւորող «Կանոնագիրք Հայոց»-ը շուտով նորովի հրատարակութիւն կ'ունենայ: ԱՄՆ Արեւմտեան թեմը, Թեմակալ Առաջնորդ Տ. Յովնան Արք. Տէրտէրեանի Նախաձեռնութեամբ պատրաստել է «Կանոնագրքի»՝ բովանդակային նիւթերը տեսակաւորած եւ աշխարհաբարի վերածած տարբերակը, հեղինակութեամբ Տիրայր Մ. Վրդ. Տէրվիչեանի:

Տիրայր Վարդապետը (1909-1989) մեր եկեղեցու նուիրեալ հոգեւորականներից է, եղել է Երուսաղէմի Հայոց միաբան, տարիներ պաշտօնավարել է նաեւ




հատորներից քաղել, թեմատիկ բաժինների մէջ է գետեղել կանոնական նիւթերը՝ միաժամանակ գրաբարից արեւմտահայ աշխարհաբարի փոխադրելով: Հեղինակը մէկ բաժնի մէջ է հավաքել մեր եկեղեցու այս կամ այն հասկացութեան հետ կապուած (օրինակ ասենք՝ երէց, խաչ, ծնող/որդի, հաղորդութիւն եւ այլն) բոլոր կանոնները: Ընթերցողը կարիք չունի էջ առ էջ թերթելու «Կանոնագրքը»՝ իրեն հարկաւոր որեւէ մասը գտնելու համար, Հայր Տիրայրը դա արել է՝ խմբաւորուած եւ աշխարհաբարի վերածուած տարբերակով:

Տիրայր Վրդ. կենդանութեան ժամանակ այս աշխատութիւնը չի տպագրուել եւ մնացել էր պահպանուած: Կարեւոր այս աշխատութիւնը կարող էր կորսուել ժամանակի վաշտի վերամշակման մէջ, եթէ բարեբախտ մի առիթով Արեւմտեան թեմի աշխատակից Հայկ Մաղոյեանը դրա մեքենագրուած տարբերակը 2008 թուականին չգտնէր Տիրայր Վարդապետի՝ Միացեալ Նահանգներում գտնուող անձնական արխիւի ծրարների մէջ: Ապա Թեմակալ Առաջնորդ Տ. Յովնան Արք. Տէրտէրեանի տնօրինումով սկսուեց ձեռագրի արժէք ունեցող մեքենագիր տարբերակի մուտքագրումը համակարգիչի մէջ (Տ. Յովնէփ. Ա. Քահանայ Յակոբեան), երկարատեւ սրբագրումը, որի վրայ աշխատել է խմբագրական խորհուրդն ու աշխատանքային խումբը: Եւ ահա ուրախութեամբ յայտնում ենք, որ պատրաստ է եւ շուտով լոյս կը տեսնի «Կանոնագրքի» այս խմբաւորեալ նոր տարբերակը:

Հայր Տիրայրի այս աշխատութիւնը յարմար առիթ կը հանդիսանայ, որ հոգեւորական կամ աշխարհական առաւել դիւրութեամբ իրազեկ դառնան մեր կանոնագրական աւանդութեանն ու հոգեւոր հարուստ ժառանգութեանը:

Արեւմտեան թեմը «Կանոնագիրք Հայոց»-ի սոյն աշխատասիրութիւնը հրատարակում է որպէս գնահատանք բանիբուն Տիրայր Մ. Վարդապետ Տէրվիչեանի, ի դիւրութիւն հոգեւորականաց եւ հաւատացեալ հայրերէնաց եւ որպէս ձօն առաքելահաստատ մեր ս. եկեղեցւոյ:



Արեւմտեան թեմում: Ստեղծել է «Յրուագանկ Յատուկ Անուններու», որ Մաղաքիա Արք. Օրմանեանի հռչակաւոր «Ազգապատում»-ի համաբարբաուն է եւ արդիւնքն է երկարատեւ ու համբերատար աշխատանքի: Տասնամեակներ շարունակ անխոնջ վարդապետը բծախնդրօրէն աշխատել է Կանոնագիրքի ստուար հատորները բովանդակային սահմանների մէջ բերելու, խմբաւորելու եւ աշխարհաբար թարգմանելու համար:

Հայր Տիրայրը «Կանոնագիրք Հայոց»-ի 1964, 1971 թթ. երկու

ՄԵԼՂՈՆԵԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԴԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ

Շարունակուած էջ 14-էն

հարկէ Փողարեանները առանձինն չէին կրնար գլուխ հանել այս վերափոխութիւնը եւ Գօշի նոր վերածնունդը, եթէ իրենց շուրջ չհաւաքուէին ու *ձեռք ձեռքի տալով քոյր եղբար կաթոգին» չօգնէին Մելգոնեանցի դասընկերները եւ անշուշտ նոր շունչ ու ոգի ստացած զօջեցիներու համայնքը:

Ահաւասիկ այս է, զոր մենք կը կոչենք Մելգոնեանցիի ոգի, դաստիարակութիւն եւ յանձնառութիւն: Քանի քանի Փողարեաններ եւ

ընկերներ պիտի հասցնէր ՄԿՀ-ն 2005-էն սաղին, եթէ կամայական ու անհետեւ օրոշումով մը չառնուէր:

Կը մօտենայ այս փառապանծ հաստատութեան հիմնադրութեան 100-ամեակը: Նախ՝ Մելգոնեանցիին հոգալ պէտք է ըլլայ իր դպրոցը վերաբանալու ինդիւրը, ապա մեր ազգային կազմակերպութիւնները, մշակութային միութիւններն ու յատկապէս Հայաստանեայց եկեղեցին եւ մեր քոյր եկեղեցիները վճռակամ որոշում պէտք է ընդունին փրկել համայն հայութեան պէտքերուն հասած այս հաստատութիւնը:

Հայկազեան Հայագիտական Հանդեսի 2022 Տարուան Զոյգ Գիրքերուն Ծնորհանդեսը



Հինգշաբթի, 19 Յունուար 2022ի երեկոյեան, Հայկազեան համալսարանի հանդիսասրահին մէջ տեղի ունեցաւ Հայկազեան հայագիտական հանդէսի (ՀՀՀ) 2022 տարուան (42րդ հատոր) զոյգ գիրքերուն (42/1 եւ 42/2) շնորհանդէսը, ներկայութեամբ Հայկազեան համալսարանի նախագահ Վեր. դոկտ. Փոլ Հայտոսթեանի, Հանդէսի հնագոյն աշխատակից, Հայաստանի Հանրապետութեան գիտութիւններու ազգային ակադեմիայի արտասահմանեան անդամ պատմաբան պատուակալ դոկտ. Զաւէն Մարրլեանի, Միլիթարեան միաբանութեան փունջ մը սաներու, հիւրերու, բարեկամներու եւ Հանդէսի խմբագրակազմի անդամներուն:

Բացման խօսքին մէջ, Հանդէսի խմբագիր դոկտ. Արմէն Իւրնէշլեան հրաւիրեց ներկաները յոտնկալ լուծեամբ յարգելու յիշատակը Հանդէսի խմբագրակազմի ապա եւ խորհրդատու մարմնի անդամ հանգուցեալ Ժիրայր Դանիէլեանի յիշատակը, որմէ ետք ան նշեց թէ 42րդ հատորէն սկսեալ Հանդէսը լոյս պիտի տեսնէ մէկ հատոր-երկու գիրք դրութեամբ: Դոկտ. Իւրնէշլեան արձանագրեց ընթացիկ հատորով սկսող նորութիւնները? «ՀՀՀի նոր մշակուած առաքելութիւնն ու տեսլականը», «մասնագիտական հարցազրոյց»ի բաժինը, «ազգագրական, բանահիւսակական» հում նիւթի ներկայացումը, հատորները եզրափակող «Յիշատակարան»ը, միաժամանակ նշելով, թէ Հանդէսը «բեմ կը հանդիսանայ նաեւ երիտասարդ գիտնականներու, այն հաստատ համոզումով, կամ գէթ ակնկալիքով, որ անոնք այս հանգամանակոր հանդէսին մէջ հրատարակուելով, կը դառնան աւելի խստապահանջ, աւելի՛ բծախնդիր եւ յօրուած առ յօրուած կը բարելաւեն իրենց աշխատանքը»:

Վաստակաշատ բանասէր դոկտ. Յակոբ Զոլաքեանի խօսքը ընթերցեց Հանդէսի խմբագիր տիկ. Սիլվա Փափազեան: Դոկտ. Զոլաքեան ՀՀՀն նկատեց «Ներկայիս՝ Սփիւռքի մէջ աւանդական ուղղագրութեամբ լոյս տեսնող փաստօրէն միակը... բոլոր գրութիւնները, արեւմտահայերէն թէ արեւելահայերէն, լոյս կը տեսնեն աւանդական ուղղագրութեամբ: Մեր ուղղագրութեան բազմաձեւութիւններու բովին մէջ խմբագրութիւնը միօրինականացման յստակ մօտեցում կը ցուցաբերէ: Ասիկա յոժ կարեւոր փաստ մըն է հայագիտութեան արեւմտահայ աւանդութիւնները պահպանելու տեսակէտէն»: Ապա ան ընդգծեց, թէ «Հայագիտութեան նուաճումները պէտք է հասնին օտար ընթերցողին, ասիկա անհրաժեշտութիւն մըն է... մեր ցանկութիւնն է, որ մեր ուսումնասիրողները նախ կիրարկեն արեւմտահայերէնը եւ

հոսկ, հանրայնացնելու համար արժանի նիւթերը՝ շարադրեն անգլերէնով կամ այլ լեզուով մը: Հայագիտութիւնը մեր հոգեւոր եւ նիւթական մշակոյթի արժէքները արժեւորելու ու հանրայնացնելու դերը ունեցած է եւ ունի ներկայիս, - ու թելադրեց, - պէտք է կարողանալ օտար եւ օտարազիր հայագետներուն ալ ցանկալի բեմ դարձնել Հանդէսը: ...Մանկակալուի նաեւ, որ Հանդէսը կարողանայ սերտ կապեր հաստատել ամբողջ Սփիւռքի տարածքին սփռուած հայագիտական հիմնարկներու եւ ամբիոններու հետ ու ապահովել անոնց մերձեցումն ու նոյնիսկ համատեղ ծրագրեր մշակել»: Դոկտ. Զոլաքեան անդրադարձաւ նաեւ ընդգրկուած նիւթերուն խմբաւորումներուն՝ պատմահնագիտութիւն, գրականագիտութիւն, լեզուաբանութիւն, տնտեսագիտութիւն, արուեստ ու արհեստ, ընկերաբանութիւն, բանարուեստ եւ ազգագրութիւն, եկեղեցագիտութիւն, փիլիսոփայութիւն, հրապարակումներ եւն., մասնաշնչեց «մօտիկ անցեալի մեր խնդիրները լուսարձակի տակ» առնող նիւթեր, ու շեշտեց՝ «Մեզի համար յոժ կարեւոր են արեւմտահայութեան ու մասնաւոր սփիւռքահայութեան վերաբերող ուսումնասիրութիւնները, որոնք լուսարձակի տակ կ'առնեն որոշ տեղավայրեր,

դէպքեր ու դէմքեր, կամ կու տան համայնքային-չարանուանական ու գաղութային պատմութեան պատկերը», «ցանկալի» նկատեց որ «սփիւռքահայ գրականագետներ, արուեստաբաններ եւ երաժշտագետներ տեղ գրաւեն Հանդէսին մէջ»: Ան նկատեց որոշ հետաքրքրութեան մը ներկայութիւնը «Սփիւռքի մէջ հայ ժողովուրդի նիւթական մշակոյթի ցրուած արժէքները հաւաքողներուն եւ հանրայնացնող ուսումնասիրողներու նկատմամբ», կարեւորեց Հանդէսի հրապարակումներու բաժինը, Հանդէսին «խրաչատկութիւններէն» համարեց աշխատակիցներու կենսագրութեան ու «մահագրականներ» բաժինները: Հոսկ, ան գնահատելով Հանդէսի լեզուագիտութեան բաժինը, «ցանկալի» գտաւ որ «Սփիւռքի համար լրջագոյն խնդիր ներկայացնող արեւմտահայերէնի ուսուցման հետ կապուած հարցերը՝ մեթոտաբանութիւն, դասագիրքեր, ուսուցիչներու որակաւորում, առկայ եւ աւելցանց, ամէնօրեայ եւ միօրեայ ուսուցման հարցերը... քննարկումի ենթարկուին» Հանդէսին մէջ: Դոկտ. Զոլաքեան շնորհակալութիւն յայտնեց Հանդէսի հրատարակութեան զօրավիճական գնահատած մարմիններուն եւ խմբագրակազմին «բծախնդիր ու հետեւողական աշխատանքներուն»:

Շնորհանդէսի գեղարուեստական բաժինով, 42րդ հատորի առաջին գիրքին մէջ լոյս տեսած հանգուցեալ Վահան Ա. քնչ. Քենտրիքեանի ինքնագիր յօրինումներէն երգեց իր թողը՝ տիար Սեւակ Քենտրիքեան:

Անդրադառնալով դարերու ընթացքին բառերու, հասկացութիւններու եւ հաստատութիւններու հանդէպ մարդ արարածին ընկալման փոփոխութիւններուն, Հանդէսի պատասխանատու խմբագիր դոկտ. Անդրանիկ Տագսեան հաւաստեց, որ ՀՀՀի «պատկան մարմինները, խմբագրակազմս ու անոր շուրջ հաւաքուածներս ... կը դառնան հայագիտութիւն հասկացութեան նոր սահմանումին, զայն աւելի լայն կը տեսնենք քան դասական հայագիտութիւնը...: Մեր դաւանած հայագիտութեան նոր սահմանումը կը կիրարկենք ... Հանդէսին մէջ... քանի որ կը հաւատանք որ այդպէսով հայագիտութիւնը կ'ազատուի կ'ազատուի ան առաւել օգտապաշտական, սատարողական կը դառնայ: Ասիկա գործընթաց մըն է, որուն իրագործումը հետեւողականօրէն կը հետապնդենք»: Դոկտ. Տագսեան եզրափակեց իր խօսքը, ընդգծելով, որ «Ժամանակն է, որ ազգային գերագոյն ճգնաժամի այս օրերուն, մենք մեր բաժինը կատարած ըլլալու ինքնախաբէութեան քամֆլորթ գոնէն դուրս գանք եւ արտակարգ ուսումով մը վերախմաստաւորենք մեր ազգային հասկացութիւնները եւ վերախմաստաւորուած կիրարկենք զանոնք»:

Փակման իր խօսքին մէջ, Հայկազեան համալսարանի նախագահ Վեր. Հայտոսթեան գոհունակութիւն յայտնեց Հանդէսին արձանագրած յաջողութիւններուն, անոր հետեւողական հրատարակման, մակարդակին պահպանման: Ան Հանդէսի 2022 տարուան զոյգ գիրքերու հրատարակումը նկատեց «վստահաբար զարգացման քայլ», աւելցնելով որ «գոհունակութիւն անպայման չի նշանակեր բաւարարութիւն: Սակայն, երբ կայ պատճառ գոհունակութեան՝ մենք կարեւորութեամբ պէտք է զայն ընդգրկենք»: Ան աւելցուց, որ Հայկական «նահանջի օրինակները կրնան բազմաթիւ ըլլալ մեր չորսդին: Բայց կարիքը ունինք յիշելու թէ կան նաեւ կարեւոր յատաշխաղացներ մեր հայկական կեանքին մէջ»:

Վեր. Հայտոսթեան կարեւորեց հայ դպրոցին մէջ տարուելիք աշխատանքը՝ «կարգա՛լ, մտածե՛լ եւ գրե՛լ քաջալերել, որպէսզի նորահաս սերունդները չթուլնան իրենց զարգացման եւ անձնային շնորհքին մէջ»: Ան անդրադարձաւ գիտական եւ տեղեկատուական աշխարհին մէջ տարուող մրցակցական պայքարին, հաւաստելով որ էական է «բոլոր լեզուներով առատ հայագիտական նիւթ հայթայթելը աշխարհին»:

Շար.դ էջ 18

AGBU

ARMENIAN GENERAL BENEVOLENT UNION
LOS ANGELES SPECIAL EVENTS COMMITTEE

MASQUERADE BLACK TIE DINNER DANCE

**Fundraising for the AGBU
Children's Center in Arapkir**

**featuring Harout
Pamboukjian & band**

Saturday, Feb 4, 2023 - 7:30pm

Deluxe Banquet Hall - 237 E Olive Ave, Burbank

For more info call:
Asdghig Dadourian (801) 712-1127
Betty Kotchian (818) 966-5584

\$150

per person

Ս. ԾՆՆՈՒԵԱՆ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒՔԻՆ Զայ Բոյրերու Վարժարանին Մէջ



Տարուան ամենագեղեցիկ, ամենաջերմ եւ ամենատօնական ամսուան եւ Ս. Ծննդեան իւրաքստուկ մթնոլորտը Հայ Բոյրերու Վարժարանին մէջ համերգով դրսեւորուեցաւ Չորեքշաբթի, 21 Դեկտեմբեր 2022-ին, Դանիէլեան սրահին մէջ: Ինչպէս յարմար է գերապատիւ վարդապետներ Հայր Արմենակ Պետրոսեանի եւ Հայր Լեւոն Ստեփանեանի:

Ամերիկայի, Հայաստանի եւ վարժարանի քայլերգներու ունկնդրութեանն էտք, տօնական հանդիսութիւնը սկսաւ դաշնամուրի նուագով՝ կատարողութեամբ Քրիստափոր Թերզեանի: Ապա կրօնի դասատու պարոն Անթուան Պեգեան բացման խօսքին մէջ նշեց, որ մեր վարժարանին հիմնակէտը եղող քրիստոնէական կրթութիւնը այսօր գիրքէն դուրս գալով պիտի դառնայ գործնական: «Մեր կրթական համակարգին մէջ քրիստոնէական դաստիարակութիւնը ունի իր յատուկ տեղն ու կարեւորութիւնը, որովհետեւ կը հաւատանք որ այդ է հիմքը ապագայ առողջ սերունդին եւ խաղաղ աշխարհին, ըսաւ ան եւ աւելցուց, որ տնօրէնութիւնը որոշեց մանուկ Յիսուսի ծնունդը ներկայացնել թատերական բեմադրութեամբ, որպէսզի Ս. Ծննդեան հոգիով եւ խորհուրդով լեցուած մեր պատանիներուն մտքերը լուսաւորուին մանուկի Յիսուսի պայծառութեամբ»:

Այնուհետեւ իր սրտի խօսքը փոխանցեց վարժարանիս ընդհանուր պատասխանատու Քոյր Լուիզա Գասարճեան, որ վստահութիւն յայտնեց, որ ներկայ ծնողները գոհ պիտի մնան իրենց զաւակներու ներկայացումէն եւ պիտի գնահատեն իրենց աշխատանքը: Ան խնդրեց ծնողներէն, որ իրենց զաւակներուն ընդմէջէն տեսնեն երկնային դերակատարներու մարմնաւորումը, ինչպէս՝ հրեշտակները, հովիւները, մոգերը եւ յատկապէս Սուբր ընտանիքը՝ մանուկ Յիսուսով: «Երկնքի եւ երկրի ստեղծիչ Աստուած կը խոնարհի, կը մանկանայ եւ կը ծնի քարայրի մը մէջ ու կը դրուի աղքատ մսուրին մէջ, որպէսզի մեզ ազատէ մեր մեղքերէն եւ երկնքի արքայութեան արժանացնէ, ըսաւ ան՝ յորդորելով պահ մը մոռնալ

առօրեայ մտահոգութիւնները, նեղութիւնները, ցաւերը եւ «փոխադրուիլ» Բեթղեհէմ տեսնելու եւ օրհնուելու մանուկ Յիսուսէն: Քոյր Լուիզա մաղթեց, որ նորածին մանուկ Յիսուսին խաղաղութիւնը տիրէ բոլորիս սրտերուն, տուններուն եւ համայն աշխարհին մէջ: Ան շնորհակալութիւն յայտնեց յայտագիրը պատրաստած ուսուցչուհիներուն, պարոն Անթուան



Պեգեանին եւ երաժշտութեան ուսուցչուհի Տիկ.Կարինէ Տէր Գէորգեանին որոնք աշակերտներուն հետ տքնաշան աշխատեցան այս յայտագիրը յաջողութեամբ ներկայացնելու համար: Աշակերտները կենդանի պատկերով բեմականացուցին Յիսուս Քրիստոսի ծննդեան պատկերը, պահ մը բոլոր ներկաները վերացնելով եւ մտովի ու հոգեպէս փոխադրելով բեթղեհէմեան պատիկ, աղքատիկ քարայրը, որ մեր Փրկչին ծնունդով դարձաւ արքունիք:

Տօնակատարութեան վերջին բաժնով երգչախումբը ներկայացուց Ծննդեան երգերու շարան:

Աւարտին բեմ բարձրացաւ Հայր Արմենակ Պետրոսեան, որ իր խօսքը աշակերտներուն ուղղելով ըսաւ, որ թատերական բեմականացումով ներկաները ականտես դարձան պատմական իրադրութիւն եղող Յիսուսի ծննդեան: Ան շեշտեց, որ Ս. Ծնունդը նուէրներ է, այլ՝ մանուկ թագաւորին ծննդեան տօնը նշելու առիթ: Ապա, ան «Պահպանիչեով» փակեց հանդիսութիւնը:

Հայկազեան Հայագիտական Հանդէս

Շարունակուած էջ 17-էն

Հուսկ, ան ողջունեց «Արցախի մէջ պայքարող մեր աշխատակիցները, Հայաստանի եւ Սփիւռքի հայազգայնները որոնք կը գործեն առանձին իրենց անկիւններուն մէջ կամ հաստատութիւններու մէջ, մեզմէ բաժնուած ու սիրելի ժիրայր Դանիէլեանի թարմ լիշատակը, անոր հայագիտական վաստակը Հայկազեան

համալսարանէն ներս երկար տարիներ եւ շատ անգին, ներառեալ Հանդէսի պատմութեան մէջ»: Վեր. Հայտնութեան իր խօսքը փակեց գնահատանքի խօսք ուղղելով իմ բազմաթիւ խնամքին եւ՝ «2023ի հատորով նորանոր հանդիպումներու յոյսով եւ նորոգեալ տեսիլքով» բաժնուելու առաջարկեց շնորհանդէսի այս «տօնական» պահէն: Հայկազեան Հայագիտական

ԱՆԻՖ-Ի ՏՆՕՐԷՆ Դաւիթ Փափազեանը Մասնակցած Է «Ապու Տապիի Կայունութեան Շարք» Համագումարի Շրջանակներուն Մէջ Բննարկման



Հայաստանի պետական հետաքրքրութիւններու ֆոն տի (ԱՆԻՖ) գործադիր տնօրէն Դաւիթ Փափազեանը մասնակցած է Ապու Տապիի կայուն ֆինանսաւորման 5-րդ համագումարի «Ճանապարհ դէպի COP28, ԱՄԷ» շրջանակներուն մէջ քննարկման: Այս մասին կը յայտնեն ԱՆԻՖ-էն՝ նշելով, որ համագումարը տեղի կ'ունենար Abu Dhabi Global Markets-ի մէջ եւ կը հիւրընկալուէր Մաստարի կողմէ՝ «Ապու Տապիի կայունութեան շարք» համագումարի շրջանակներուն մէջ՝ 15-19 Յունուարին:

«Ապու Տապիի կայուն զարգացման շարք» կայունութեան համաշխարհային ամէնամեայ համագումար է, որ կը ներգրաւէ շուրջ երեսուն հազար մասնակիցներու ակտիւ քան 100 երկիրներէ, ներառեալ երկիրներու ղեկավարներու, համաշխարհային առեւտրական առաջնորդներու եւ կայուն զարգացման եւ բնապահպանական, ընկերային եւ կառավարչական ոլորտի փորձագէտներու:

Դաւիթ Փափազեան մասնակցած է «Յատակ գործարքներու եւ արտադրութիւններու առաջարկը» խորագրով քննարկման, որ կը զիտարկէր, թէ ինչպէս արմատական եւ մանրակրկիտ գործառնութ-

իւնները կրնան ազդել ֆինանսական հատուածին վրայ՝ կայուն զարգացման խնդիրներու ներառման տեսանկիւնէն: Խօսած է ԱՆԻՖ-ի՝ որպէս ազգային ինքնիշխան ֆոնտի դերի մասին հայաստանեան ֆինանսական շուկային մէջ կայունութեան օրակարգի ձեւաւորման աջակցելու գործին մէջ: Մասնաւորապէս խօսուած է նաեւ ԱՆԻՖ-ի եւ Մաստարի համատեղ արեւային «Այգ-1» ծրագրի մասին՝ որպէս Հայաստանի համար դէպի կայուն ուժանիւթի անցում ուղենիշային ծրագրի մասին:

Համագումարը բաղկացած էր նիստերէ եւ քննարկումներէ՝ կեդրոնանալով այս տարուան COP28-ի վրայ, որ պիտի հիւրընկալուի Արաբական Միացեալ Էմիրութիւններու մէջ, եւ կ'անդրադառնար ֆինանսական վերջին միտումներուն, կանոնակարգերուն եւ այլ խնդիրներուն:

ԱՆԻՖ-ը յանձնառու է աշակցելու հայաստանեան գործարար միջավայրին մէջ կայունութեան օրակարգի ձեւաւորման, ապահովելով հայաստանեան առեւտրային ընկերութիւններու մրցունակութիւնը, ինչպէս նաեւ բնապահպանական, ընկերային եւ կառավարչական պատշաճ չափանիշերու ներդրումը:

Հանդէսի 42րդ հատորի երկու գիրքերը միասնաբար կը հաշուեն 67 յօդուած-ուսումնասիրութիւններ, քննարկումներ, հրապարակումներ եւ գրախօսութիւններ եւ շուրջ երեսուն հայազգայններու մահազրականներ: Ընդհանուրը՝ 1300 էջ հաշուող այս հատորին աշխատակիցները կու գան Արժանթինէն, Եգիպտոսէն, Թուրքիայէն, Լիբանա-

նէն, Հայաստանի Հանրապետութենէն, Մ. Նահանգներէն, Յունաստանէն, Չեխոսլովակիայէն, Սուրիայէն, Քանադայէն եւ Ֆրանսայէն: Հանդէսի այս եւ նախորդ բոլոր հատորներուն նիւթերը կարելի է գտնել առցանց՝ Հայաստանի Ազգային Գրադարանի եւ ՀՀ Գիտութիւններու Ազգային Գրադարանի կայքէջերուն վրայ:

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ
Name: -----
Address: -----
City: ----- State:----- Zip Code:-----
Country: -----
Tel:-----
Email: -----

ՄԱՐԱԶԴ



ՅԱՐՈՒԹ ՓԱՓԻՐԵԱՆ (Ծննդալ Հայկա, Սուրիա Մայիս 5, 1934)

Սրտի դառն կակիծով կը գուժենք մեր ամուսնունջն, հօր, մեծ հօր եւ հարազատին Յարութ Փափիրեանի մահը որ պատահեցաւ Երեքշաբթի Յունուար 10-2023-ին:

Թաղման եկեղեցւոյ կարգը տեղի պիտի ունենայ Հինգշաբթի, փետրվար 2-ին կ.ե. ժամը 2:00-ին Արեւմտեան Թեմի Առաջնորդարանի Ս. Ղեւոնդեանց Եկեղեցւոյ մէջ, որմէ ետք Թաղման գերեզմանի կարգը տեղի պիտի ունենայ Հոլիվուտ Հիլզ Ֆորեսթ Լոն գերեզմանատան մէջ 6300 Forest Lawn Drive, Los Angeles Ca.

Սգակիրներ՝

Տիկինը Ազնիւ Փափիրեան

Զաւակները՝

Տէր եւ Տիկ. Վարդան եւ Մանուէլ Փափիրեան եւ զաւակը Յարութ

Տէր եւ Տիկ. Կարպիս եւ Անի Փափիրեան եւ զաւակները Շանթ եւ Վաչէ

Դուստրը Տէր եւ Տիկ. Միհրան եւ Թամար Խաչատուրեան եւ զաւակները Արէն եւ Նարէ

Թոռնիկը Տէր եւ Տիկ. Լեւոնիկ եւ Լիանա Յակոբեան եւ դուստրերը

Քենեկալը Տէր եւ Տիկ. Հրայր եւ Ասողիկ Թէճիրեան եւ դուստրերը

Աներձագին Տիկինը Սօսի Սամուէլեան եւ զաւակները

եւ համայն Փափիրեան, Սամուէլեան, Թէճիրեան, Ճէհիգեան,

Դանիէլեան, Այնթէպլեան, Պողոսեան, Գալայճեան, Խաչատուրեան,

Յակոբեան ընտանիքները:

Փոխան ծաղկեպատի նուիրատուութիւնները կը խնդրուի կատարել InHisShoes.org, ARSWesternusa.org for Children of fallen heroes Sponsorship Program կամ VeteransofArmenia.org

Դոկտ. Արէլ Քինյ. Մանուկեան

Շարունակուած էջ 8-էն

դէմքերը, իրադարձութիւնները թէկուզ իրենց ամենատխուր եւ սահմակեցուցիչ փաստերով ճշմարտութեան լոյսին տակ պարզելու նպատակով: Մահու քսորի ճամբաներուն, Տէր Զօրի մահահոտ անապատին մէջ ալեգար դերուներն ու խլեակներու վերածուած մայրերը հայ ցեղը փճացումի ենթարկող թուրք եւ քուրտ հրէշը ի գուր անիծեցին՝ ըսելով. «Պատիժս ընդ Կայէնի կրեսցէ, ընդ Յուդայի պատժեսցի, ի Քրիստոսէ անմասն մնասցէ եւ մեր մեղաց պարտական լիցի յահագին դատաստանին»: Միեւնոյն է, համայնաջինջ քանդումին, հրէշաւոր մոլոցքին գոհ դարձան հայոց մշակութային ժառանգութեան գոհարները՝ վանքերն ու եկեղեցիները, տաճարներն ու դպրոցական կեդրոնները: Քանդուեցան հայ աճիւններ հովանաւորող խաչքարերը, պղծուեցան ու կողոպտուեցան սրբանուէր սպասները, ձեռագիր աւետարաններն ու հայ մտքին փառահեղ կոթողները՝ Ազաթանգեղոսներու, Փաւստոսներու, Կորիւններու, Փարպեցիներու, Եղիշէներու, Խորենացիներու, Նարեկացիներու, Շնորհալիներու եւ այլ մատենագիրներու բիւրաւոր մատենաներ հրոյ ճարակ դարձան թուրք եւ քուրտ

խուժանին ձեռքով՝ մարմինն հետ նաեւ սպաննելու համար հայ ցեղին սիրտը, ջնջել կարենալու համար հայոց պատմական յիշողութիւնն ու հայութեան մասին յիշատակի մը վերջին նշոյլը: Ուստի պէտք է գրել վառ պահելու համար մեր ազգային հաւաքական յիշողութիւնը, որովհետեւ ան մեր պայքարի փողփողուն դրօշն է, մեր արդար պահանջատիրութեան անխորտակելի ու զօրեղ գէնքն է»: Ապա տեղի ունեցաւ գինեձօնի արարողութիւնը մասնակցութեամբ թեմիս բարեխնամ Առաջնորդ Սրբազան Շահէ Արք. Փանոսեանի, Գերշ. Տ. Կոմիտաս Արք. Օհանեանի, գերապայծառ Տ. Գէորգ Եպս. Ասատուրեանի, Հ. Մեսրոպ Վրդ. Հայրենիի, պետական երեսփոխան տիար Յակոբ Բագրատունիի, Ս.Դ.Հ.Կ. Կեդրոնական Վարչութեան անդամ տիար Ալեքսան Բէօշկէրեանի, Փրոֆ. Դոկտ. Աշոտ Մելքոնեանի, Երուանդ Փամպուքեանի, տիկին Սեղա Մարկոսեան-Խոշեանի, տիար Ահարոն Շիրտմեանի եւ հատորներու հեղինակ՝ Դոկտ. Աբէլ Քինյ. Մանուկեանի: Գինեձօնի արարողութեան յաջորդեց հիւրասիրողութիւն եւ զիրքերու մակագրութիւն: Հեղինակին ցանկութեան համաձայն զիրքերու վաճառքին ամբողջ հասոյթը փոխանցուեցաւ «Զուարթնոց» յատուկ բարեսիրական կեդրոնին:

Մասիս Արարատեան Յաւերթի Գանրող

Յունուարի 18-ին, 2023 իր մահկանացուն կնքեց հայ եւ օտար թերթերու տասնեակ տարիներու երգիծանկարիչ Մասիս Արարատեան, 93 տարեկանին:



Արարատեանի գրիչին կը պատկանի նաեւ «Մասիս» Շաբաթերթի ճակատի անուան գծագրութիւնը, որ աւելի քան 40 տարիներէ կը զարդարէ մեր թերթի առաջին էջը:

Այս տխուր արդիւ մեր խորագրաց ցաւակցութիւնները կը յայտնենք հանգուցեալի այրիին, զաւակներուն եւ բոլոր հարազատներուն: «Մասիս» Շաբաթերթ

Մահ Եփրեմ Արք. Թապագեանի

Յաւով իմացանք մահը Մեծի Տանն Կիլիկիոյ միաբաններէն՝ Գերշ. Տ. Եփրեմ Արք. Թապագեանի, որ պատահած է Յունուարի 21-ին, 2023, 82 տարեկանին: Վարած է առաջնորդական եւ այլ բարձր պաշտօններ:

ՅԱՒԱԿՑԱԿԱՆ

ՅԱՐՈՒԹ ՓԱՓԻՐԵԱՆԻ մահուան տխուր առիթով ՄԴՀԿ վարիչ մարմինը իր խորագրաց վշտակցութիւնները կը յայտնէ հանգուցեալի հարազատներուն, մասնաւորաբար Տէր եւ Տիկ. Միհրան եւ Թամար Խաչատուրեանին

Norayr Daduryan Armeno-Turkish Translation Services

From Armeno-Turkish to Armenian and English languages. Bring your family's history back to life! Family letters, postcards, diaries, and more... Please reach out for quotes Website: norayr.daduryan.com Email: norayrdaduryan@gmail.com

Ստացուած Գիրքեր



«Լուսարձակ Վերջին Քառասնամեակին Վրայ» Դեղինակ՝ Սարգիս Յ. Սինաստեան Հրատարակութիւն՝ Թէքէեան Մշակութային Միութեան (Յօդուածներ, խմբագրականներ եւ Խորհրդածութիւններ) Լոս Անճելոս 2022 «Հասկաքաղ» Դեղինակ՝ Գրիգոր Քեօսեան «Հրապարակագրական, Երգիծանկարներ-Գծագրութիւններ» Պոսթըն - Դեկտեմբեր 2022 «Յուլքեր Ոսպնեակիս Ընդմէջէն» Դեղինակ՝ Յակոբ Տերեան (Յօդուածներ, մտորումներ եւ ապրումներ) Նիւ ձըրզի - 2023

«Արսենալ» Պարտութեան Մատնեց «Մանչեսթր Եունայթեդսին»



Անգլիոյի առաջնութեան 21-րդ հանգրուանին առաջատար «Արսենալ» Լոնտոնի մէջ հիւրընկալեց «Մանչեսթր Եունայթեդսին» եւ յաղթեց 3:2 արդիւնքով:

«Արսենալ» յաղթական կոլը 90-րդ վայրկեանին նշանակեց Նկետիան: «Արսենալ» (19 խաղ) մրցաշարային աղիւսակը կը գլխաւորէ 50 կէտով եւ 5 կէտ է առաջ է երկրորդ տեղը գտնուող ախոյեան «Մանչեսթր Սիթիին» (20 խաղ): «Մանչեսթր Եունայթեդս» (20 խաղ) չորրորդն է՝ 39 կէտ: Նոյն քան կէտ ունի երրորդ տեղը գտնուող «Նիւքասլը» (20 խաղ):

«Մանչեսթր Սիթի» Յաղթանակը, Երկրնէ Յոլանտի Յետ-Թրիքը

Անգլիոյի առաջնութեան 21-րդ հանգրուանին ախոյեան «Մանչեսթր Սիթիին» ընդունեց «Ուլվերհեմփթընին» եւ առաւելութեան հասաւ 3:0 արդիւնքով:



Բոլոր երեք կոլերը նշանակուած հետ-թրիքի հեղինակ դարձաւ 22 տարեկան նորվեկացի յարձակող էրլինգկ Հոլանտը, որ արդէն իսկ 25 կոլ նշանակած է ընթացիկ առաջնութեան: «Մանչեսթր Սիթիին» (20 խաղ) 45 կէտով երկրորդն է եւ 5 կէտ ետ է առաջատար «Արսենալէն»:

«Լիվերփուլը» Ու «Չելսին» Հաւասար

Անգլիոյ առաջնութեան 21-րդ հանգրուանին փոխախոյեան «Լիվերփուլը» ընդունեց Լոնտոնի «Չելսին»: Խաղը աւարտեցաւ հաւասար՝ 0:0:

Երրորդ վայրկեանին մրցակիցի բերդը գրաւեց «Չելսին» գերմանացի կիսապաշտպան Կայ Հաւերցը, սակայն VAR-ը ցոյց տուաւ խաղէն դուրս վիճակ:

«Լիվերփուլը» (19 խաղ) 29 կէտով 8-րդն է, «Չելսին» (20 խաղ) 10-րդն է՝ 29 կէտ:

Ռոնալտուն Նորամուտը Նշեց Սէուտական Արաբիոյ Առաջնութեան Ընթացքին

«Ալ Նասրի» նորեկ, 37 տարեկան փորթուկալացի յարձակող Կրիշտիանու Ռոնալտուն նորամուտը նշեց Սէուտական Արաբիոյ առաջնութեան:

14-րդ հանգրուանին «Ալ Նասր» նուազագոյն արդիւնքով յաղթեց «Ալ Իթիֆաքին»: Միակ կոլը 31-րդ վայրկեանին նշանակեց պրագիլցի կիսապաշտպան Անտերսըն Թալիսկան:

Ռոնալտուն «Ալ Նասրի» աւագն էր, խաղցաւ ամբողջ հանդիպումը, արդիւնաւէտ գործողութիւններով աչքի չէինկաւ:

«Նափոլին» Յաղթեց Եւ Արդէն 12 Կտով Առաջ Է «Միլանէն»

Իտալիոյի առաջնութեան 19-րդ հանգրուանին առաջատար «Նափոլին» հիւրընկալեց «Սալերնիթանային» եւ յաղթեց 2:0 արդիւնքով:


«Նափոլին» 50 կէտով կը գլխաւորէ մրցաշարային աղիւսակը եւ 12 կէտ առաջ է երկրորդ տեղը գտնուող «Միլանէն», որ մէկ խաղ պակաս կատարած է:

«Ռոման» Յաղթեց Եւ Հաւասարեցաւ «Ինթերին»

Իտալիոյ առաջնութեան 19-րդ հանգրուանին «Ռոման» հիւրընկալեց «Սպեցիալին» եւ առաւելութեան հասաւ 2:0 արդիւնքով:

«Ռոման» 37 կէտով հաւասարեցաւ երրորդ տեղը գտնուող փոխախոյեան «Ինթերին», որ մէկ հանդիպում քիչ կատարած է:

Կարէն Խաչանով Հասաւ Կիսաեզրափակիչ



Աշխարհի 20-րդ ռակետ, Ռուստանցի Կարէն Խաչանովը հասաւ թենիսի Աւստրալիոյ բաց առաջնութեան կիսաեզրափակիչ:

Հայ թենիսիստը քառորդ եզրափակիչին երեք սեթի ընթացքին պարտութեան մատնեց Ամերիկացի Սեպասթիան Քորտային:

Կարէն Խաչանովն առաջին անգամ հանդէս կու գայ Աւստրալիոյ բաց առաջնութեան կիսաեզրափակիչին:

Աւստրալիոյ բաց առաջնութեան մրցանակային հիմնադրամը 51,3 միլիոն տոլար է:

Քառորդ եզրափակիչին արձանագրած յաղթանակէն ետք, Խաչանով իր գորակցութիւնը չափեց Արցախի ժողովուրդին:

Ատրպէյճանի թենիսի ֆետերացեան այս կապակցութեամբ բողոք չափեցաւ է թենիսի միջազգային ընկերակցութեան:

Սամուէլ Տէր-Սահակեանը Եւ Մարիա Գէորգեանը՝ Հայաստանի Գատրակի Ախոյեաններ



Գրոսմայստեր Սամուէլ Տէր-Սահակեանը 2-րդ անգամ (2020, 2023) նուաճեց Հայաստանի գատրակի ախոյեանի տիտղոսը:

Հայաստանի տղամարդկանց գատրակի 83-րդ առաջնութեան վերջին՝ 9-րդ հանգրուանին, ան սպիտակ խաղաքարերով յաղթեց Ռոբերտ Յովհաննիսեանին, վաստակեցաւ 6,5 կէտ եւ գրաւեց առաջին տեղը:

Մարիա Գէորգեան 5-րդ անգամ ըլլալով նուաճեց Հայաստանի ախոյեանի տիտղոսը:

Ճատրակի կանանց Հայաստանի Բարձրագոյն խումբի 78-րդ առաջնութեան վերջին հանգրուանին Մարիա Գէորգեանը սեւ խաղաքարերով պարտութեան մատնեց Նուարդ Հայրապետեանին:

Մարիա Գէորգեանը 9 հնարաւորէն վաստակեց 7 կէտ՝ միանձնեայ գրաւելով առաջին տեղը:

Պետրիի Կոլը Յաղթանակ Ապահովեց «Պարսելոնային»

Սպանիոյի առաջնութեան 18-րդ հանգրուանին «Պարսելոնան» իր դաշտին վրայ մրցեցաւ «Խետաֆէի» հետ: Սպանացի Չաւրի գլխաւորած խումբը յաղթեց նուազագոյն առաւելութեամբ՝ 1:0:

Միակ կոլը 35-րդ վայրկեանին նշանակեց սպանացի կիսապաշտպան Պետրին, որու կոլային փոխանցում կատարեց պրագիլցի յարձակող Ռաֆինեան:

«Պարսելոնան» 44 կէտով կը գլխաւորէ մրցաշարային աղիւսակը եւ 6 կէտ առաջ է երկրորդ տեղը գտնուող «Ռեալէն», որ մէկ հանդիպում պակաս կատարած է:

«Ռեալ» Յաղթեց Բենգեմայի Եւ Կրոսի Կոլերուն Շնորհիւ

Ապանիոյ առաջնութեան 18-րդ հանգրուանին ախոյեան «Ռեալը» Պիլպատի մէջ հիւրընկալեց «Աթլետիկին» եւ յաղթեց 2:0 արդիւնքով:

Արքայական խումբին յաղթանակ ապահովեցին ֆրանսացի յարձակող Քարիմ Բենգեման եւ գերմանացի կիսապաշտպան Թոնի Կրոսը: